№ 255 ՈՒՐԲԱԹ 15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1913 ՈՒՐԲԱԹ 15 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 255

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 2 ՌՈՒԲ.
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ) –20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։
Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая 32, Պարիզում՝ Площадь Биржи 8
1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 րուբլին, ձրիաբար կը ստանան հետևեալ 2 գրքերը. 1) «Մշակ» և հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»։
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ
ԳԻՆԸ 2 ՌՈՒԲ.
ՅԱՒԵՐԺ ՅԻՇԱՏԱԿ
ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐ
ՍԻՄԷՕՆ ԶԱՒԱՐԵԱՆ
ԿՈՍՏ. ԽԱՏԻՍԵԱՆ
«ՏԱՐԱԶԻ» հոկտեմբերեան ՀՐԱՏԱՊ №-ը անթիւ պատկերներով և յօդուածներով։ Վերադիր վճարով և ապառիկ պատուէր չէ ընդունվում։
ԴԻՄԵԼ՝ ТИФЛИСЪ, БЮРО ПЕЧАТИ. Головинскій пр. 41.
(օ. մ.) տո. 31. 8—7

ԲԺԻՇԿ
Մ. Կ. ՄԱՐՈՒՔԵԱՆ
ՄԱՍՆԱԳԷՏ
Սիֆիլիս, վեներական և կաշուի
հիւանդութիւններ։
Ընդունելութիւն (առ. ժ. 1—2
(եր. ժ. 5—8
Ելիզաւէտինսկայա փ. № 39. տ. Զաղէթեանի։
(չ.ու.) տո. 901. 100—7

Առաջնակարգ ցիրկ
ԵՂԲ.
ԵՍԻԿՕՎՍԿԻՆԵՐԻ

Այսօր, ուրբաթ, նոյեմբ. 15-ին, տեղի կունենայ ցիրկային խաղը ներկայացում բաղկացած երեք բաժանմունքներից, մասնակցութեամբ առաջնակարգ արտիստների։ Թիֆլիս է ժամանել աշխարհահռչակ ռուս ըմբիշ Նիկօլայ Վախտուրօվը և բոլոր ըմբիշներին հրաւիրել է մարտի։ Այսօր կըմբշամարտեն— վճռական՝ Իվան Կայինը՝ Մայսուրաձէի հետ, Ժան-Սարատիէն՝ Նեգր Չէմբէր Ցիպսի հետ, Նիկօլայ Վախտուրօվը՝ Փակսոնաձի հետ։
Ներկայացման սկիզբը ժամը 8-ին, ըմբշամարտի սկիզբը ժամը 9½-ին, իսկ ներկայացման աւարտը ժամը 11-ին։
տո. 1039. 1—1

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Վերադառնալով արտասահմանից վերանորոգեց ներքին հիւանդութիւնների ընդունելութիւնը. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՕԹՕՐԱԿՍՈՎ։ Թոքերի և սրտի քննութիւնը լուսաւորված ՌԵՆՏԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամէն օր՝ 9—1 ժամ ցեր. և 5—7 ժ. երեկոյեան. ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ ԱՌ. Ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская 23.
тел. 7—92.
(ա.ս.) տո. 977. 100—13

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՆ ԵՒ ՀՈԿՏԵՄԲԵՐԵԱՆՆԵՐԸ

Ինչպէս գիտենք, երրորդ և այժմեան՝ չորրորդ Պետական Դումաներում գերակշռող և վճռական դեր կատարողը հանդիսացաւ և հանդիսանում է հոկտեմբերեանների կուսակցութիւնը։ Այդ կուսակցութիւնը իրան դէվիզ, նշանաբան ընդունեց համաձայնութիւնը և համերաշխութիւնը կառավարութեան հետ, կարծելով որ այդ եղանակով կարող է իրագործել հոկտեմբերի 17-ի մանիֆեստի սկզբունքները։

Սակայն իրականութիւնը այլ հետևանք արտադրեց։

Հոկտեմբերեանների այդ գործելակերպը այն հետևանքն ունեցաւ, որ չը նայած նրանց արած զիջումներին, նոյն իսկ յաճախ նուաստացուցիչ զիջումներին, մանիֆեստի սկզբունքները չիրագործվեցին և Պետական Դուման դարձաւ աւելի մի կառավարական օրգան, քան մի անկախ օրէնսդրական հաստատութիւն։ Ճիշդ է, հոկտեմբերեան կուսակցութիւնը զսպեց ծայրայեղ աջակողմեանների ձգտումները և ծրագիրները, բայց միւս կողմից իրանից ձախ գտնվող կուսակցութիւնների աշխատութիւններն էլ ենթարկվեցին ամլութեան, և Պետական Դուման, թէ երրորդը և թէ ներկայ չորրորդը, չունեցաւ ստեղծագործական և օրէնսդրական ոչ մի լուրջ աշխատութիւն։

Հոկտեմբերեան կուսակցութիւնը այժմ նոր զգաց իր գործած սխալը։ Նրա լիդէրներից մինը՝ Գուչկօվ, կուսակցական համագումարի մէջ վերջերս արտասանեց մի ճառ, որ, իբրև բնորոշող երկրի ժամանակակից քաղաքական դրութիւնը, հասարակական և քաղաքական ահագին նշանակութիւն ունի։ Իր ճառի մէջ բացատրելով մինչև այժմ անցած-դարձածը, Գուչկօվը գալիս է այն եզրակացութեան, թէ մեր ապրած րոպէն ներկայանում է ռուսական պետականութեան ճգնաժամ, որ ստեղծվել է ոչ թէ հասարակական տրամադրութիւնների արմատականութեամբ, այլ կառավարական շրջանների անսահման և սանձարձակ ռէակցիոնութեամբ, այնպէս որ պէտք է պարզ կերպով խոստովանել այժմ, որ վտանգը պետութեան համար սպառնում է ոչ թէ ձախից, այլ աջից և, խոստովանելով այդ, պէտք է դրա համաձայն որոշել և մեր գործելակերպը։ Ապա նա խորհուրդ է տալիս Պետական Դումային, որ նա այլ ևս փոքրոգի զիջումներ և նուաստացուցիչ համաձայնութիւններ չանի և դրանով չը գործի ժողովրդական ներկայացուցչութեան քաղաքական ինքնասպանութիւն։ Դուման պարտաւոր է, Գուչկօվի կարծիքով, գործադրել բոլոր այն միջոցները, պարլամենտական խօսքի իր ազատութեան բոլոր իրաւունքները, հարցապնդումների և բիւջետային իր բոլոր իրաւունքները և դրանով ստիպել կառավարութեան լրջօրէն ձեռնարկել հոկտ. 17-ի մանիֆեստի իրագործման։

Մի խօսքով, Գուչկօվը յորդորում է իր կուսակիցներին այսուհետև ձախանալ և այլ ևս զիջումներ չանել կառավարութեան ու համաձայնութիւններ չը կնքել նրա հետ։

Անշուշտ, Գուչկօվի ճառի ազդեցութիւնն է, որ կուսակցութեան համագումարը կայացրել է որոշում, որի մէջ հաստատում է, թէ ժամանակակից կառավարական կուրսը լիակատար հակասում է հոկտ. 17-ի մանիֆեստին, որ իշխանութեան և հասարակութեան միջև խորին գժտում կայ, ուստի և առաջարկվում է պարլամենտի հոկտեմբերեանների ֆրակցիային մաքառել կառավարութեան վնասակար քաղաքականութեան, կամայականութեան և օրինազանցութիւնների դէմ, գործադրելով բոլոր պարլամենտական միջոցները, ինչպէս օրինագծերի և կրեդիտների մերժումը և այլն։

Եթէ այս ռեզօլիւցիան նոյնութեամբ գործադրվի և, արդարև, հոկտեմբերեան կուսակցութիւնը հանդիսանայ Պետական Դումայում իբրև օպպօզիցիա, այլ խօսքերով, նա աւելի ձախանայ, քան մինչև այժմ էր, պէտք է սպասել, որ առաջիկայ նստաշրջանում Պետական Դումայի գործունէութիւնը բոլորովին այլ կերպարանք կը ստանայ, քան մինչև այժմ էր։

Ցամենայն դէպս յուսալ պէտք է, որ տեղական ինքնավարութիւնների խնդիրը կամ հասարակական և ժողովրդական տարրերի գործակցութեան անհրաժեշտութիւնը տեղական կառավարութիւնների մէջ կարող է նպաստաւոր լուծում ստանալ։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

13 նոյեմբերի

Վիեննա.—Աւստրիական պատգամաւորութեան մէջ արտաքին քաղաքականութեան քննութեան ժամանակ զեկուցանող Բակկենհէմը մատնանշում է, որ միապետութիւնը ապացուցեց իր խաղաղասիրութիւնը. բալկանեան ճգնաժամի հետևանքները՝ միապետութեան համբերութեան պտուղն էին, որովհետև միապետութիւնը կամենում է սոսկ տնտեսական նուաճումներ անել Բալկաններում։

Գերմանացի արմատական Վօլֆ ասաց, որ բալկանեան ճգնաժամը վնասեց միապետութեան, որովհետև երբեակ դաշնակցութեանը բարեկամ Թիւրքիայի տեղ դէպի երրեակ համաձայնութիւնը թեքվեցին սլաւօնական երկիրները. հռետորը չէ կարող վստահութիւն յայտնել Բերխտոլդին։

Կրամարժը խստագոյնս քննադատում է Բերխտոլդի քաղաքականութիւնը. կառավարութիւնը կարող եղաւ այնպէս գործել, որ սերբերը մուտք չը գործեցին Ալբանիա, բայց դրա փոխարէն սերբերը ամրացան այնտեղ, ուր Աւստրիան կը կամենար տեսնել բօլգարներին. Աւստրիան ձգտում է պատրաստել Ալբանիան Իտալիայի համար։ Աւստրիայի ապագան կայանում է նրանում, որպէս զի արդարացի վերաբերմունք ունենայ դէպի սլաւօնականութիւնը։

Պաշտօնական օրգանները, հրատարակելով բօլգարական գաղտնի պայմանագիրը, գտնում են, որ պայմանագիրը ապացուցանում է, թէ ո՛ր աստիճան անհրաժեշտ էր խորտակել բալկանեան դաշնակցութիւնը և խոչընդոտ լինել Սերբիային մուտք գործելու Ադրիատիկ ծովը. «Ցէյտ» ասում է. «Բալկանեան դաշնակցութիւնը իսկական դաւադրութիւն էր ընդդէմ Աւստրիայի. Ռուսաստանը ոչ միայն մասնակից է, այլ և դրդող։ Դաշնակիցներին Աւստրիայի հետ պատերազմելը բառ երևոյթին հաւանական էր թւում, քան թէ ընդդէմ Թիւրքիայի»։

Աւստրիական պատգամաւորութեան զինւորական մասնաժողովի մէջ Գրօբմայէրն ասաց. «Եթէ, չը նայած հանուր Եւրոպային ընդգրկած տենդային սպառազինման, աջողվեց չէզոքացնել բալկանեան պատերազմը, դրա պատճառը այն յարգանքն էր, որ մեծ պետութիւնները զգում են դէպի երրեակ դաշնակցութեան ռազմի ոյժը։ Սակայն պատերազմի երկիւղը չէ անցել. եթէ հարաւ-սլաւօնական հարցի լուծումը նպաստաւոր չը լինի, այն դէպքում Աւստրո-Ունգարիայի համար կարող է ծագել լուրջ վտանգ։ Եւրոպական պատերազմի առաջն առնելու համար անհրաժեշտ է Աւստրո-Ունգարիայի խոհուն ներքին ու արտաքին քաղաքականութիւն, յենված ուժեղ նաւատորմի և զօրքի վրա»։

Ֆէրդինանդ արքան «Նիւ-Եօրկ Հերալդի» թղթակցի հետ խօսելիս ասաց, որ չէ հասկանում, թէ ո՞րտեղից լոյս ընկաւ իր՝ գահից հրաժարվելու տեղեկութիւնը. որսից և իր նախնիների դամբարաններն այցելելուց յետոյ նա կը վերադառնայ Սօֆիա. նա չէ հաւատում, թէ Բօլգարիայում գոյութիւն ունենայ հակադինաստիական կուսակցութիւն. նա սովորական այցելութիւններ գործեց Ֆրանց Յովսէփ կայսրին և Բերխտոլդին։

Արքայազն Բօրիսը հեռագրում է, որ Բօլգարիայում ամէն ինչ հանգիստ է։

Պատգամաւորների պալատում գերմանական բանւորական կուսակցութեան անդամ Զէյդլը խիստ կերպով յարձակվեց սօցիալ-դեմօկրատների վրա. Նախագահող սօց.-դեմօկրատ Պերնէրստորֆէրը պարսաւեց Զէյդլի ճառը, բայց հռետորին կարգի չը հրաւիրեց, որ և առիթ տուեց գերմանացի նացիօնալիստներին աղաղակելու, իսկ սօց.-դեմօկրատներին ծափահարելու, որոնք սկսեցին շաքար նետել գերմանական արմատականների վրա։ Նիստը փակվեց աղմուկի մէջ։

Սօֆիա. — Նացիօնալիստական օրգանները հերքում են այն տեղեկութիւնները, թէ գուցէ Ֆէրդինանդը հրաժարվի գահից, և մատնանշում են, որ այդ լուրերը տարածում են Բօլգարիայի թշնամիները, Բօլգարիայի անաջողութիւնների պատասխանատւութիւնը ամբողջովին անպարտ արքայի վրա գցելու նպատակով։

Կ. Պօլիս.—Կառավարութիւնը թոյլ տուեց վերահրատարակել յունական երկու օրաթերթ։

Հաստատվեց գերագոյն զինւորական դատարան՝ վերջին պատերազմի պարտութիւնների յանցաւորներին որոշելու համար։

Ադրիանուպօլսի ազգաբնակութեան խնդիրքով՝ վաղը այնտեղ է մեկնում մեծ վէզիրը։

Բելգրադ.—Պետր թագաւորն ունկնդրութեան ընդունեց պրօֆ. Իօրգին և ռումինական պատգամաւորութեան, որ եկել է թագաւորին մատուցանելու Կարագեօրգիի զանգակը, որ գտնվել է Կրայօվի փլատակների մէջ։ Կայացաւ պաշտօնական ճաշ ի պատիւ պատգամաւորութեան և գիտութիւնների ճեմարանի հանդիսաւոր նիստը ի պատիւ պրօֆ. Իօրգի՝ մինիստր-նախագահի և լուսաւորութեան մինիստրի ներկայութեամբ։

Ցետինիէ.—Թագուհի Հեղինէի առողջական դրութիւնը, որ վերջերս երկիւղ էր ներշնչում, այժմ լաւ է։

Կահիրէ.—Անգլիական նաւատորմերը հեռացան Պորտ-Սայիդից և Ալեքսանդրիայից։

Պորտ-Սայիդ եկաւ իտալական նաւատորմի երկրորդ մասը դուքս Աբրուցցիի հրամանատարութեամբ։

Եկաւ Մարօկկօյի նախկին սուլթան Մուլայ-Հաֆիզը։

Տօկիօ.—Պետերբուրգի ճապօնական դեսպան Մօտօնօն ռուս-ճապօնական ընկերութեան մէջ իր ճառի մէջ ընդգծեց, թէ ներկայումս Ռուսաստանի և Ճապօնիայի քաղաքական յարաբերութիւնները գերազանց են։

Պրագա.—Կայարանում երկաթուղայինների սխալ դասաւորութեան պատճառով մարդատար գնացքն ընդհարվեց ապրանքատարի հետ։ Վիրաւորվեցին աւելի քան 50 մարդ։

ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

Մի էջ

1903 թւի գարնանը Ա. Քալանթարից հրաւէր ստացայ ստանձնելու կաթնատնտեսութեան հրահանգչի պաշտօնը։

Գործը բոլորովին նոր էր։ Ա. Քալանթարի ջանքերով աջողվել էր կառավարութիւնից ստանալ մի քանի հարիւր րուբլի Կովկասում առաջին հրահանգչական գործը կազմակերպելու համար։

Թիֆլիսում նրանից կարևոր հրահանգներն ստանալուց յետոյ, անհրաժեշտ գործիքները վերցնելով, ճանապարհվեցի դէպի Ղարաքիլիսայի լեռները։

Չէի հաւատում գործի աջողութեանը, որովհետև լաւ ճանաչում էի հայ գիւղացու յամառ պահպանողականութիւնն ու կասկածամտութիւնը դէպի ամէն մի նորութիւն։

Մի շաբաթից յետոյ Ա. Քալանթարը իջաւ ձիուց Սանամաուրուղանի գեղեցիկ լանջում խփած վրանիս առաջ։

Հարվում էր առաջին խնոցին։

Նա ուրախ էր, չափազանց ուրախ։

Երևոյթը փոքր էր, չնչի՜ն. մի խնոցի էր հարվում... Բայց այդ հեռատես և փորձառութեան բովով անցած մարդը հասկանում էր, որ Սանամաուրուղանի լանջերում ծընունդ է առնում մի գործ, որ պիտի հանդիսանար ամենաամուր օղակներից մէկը այն պայմանների, որոնք հայ գիւղացուն, վերջ ի վերջոյ, պիտի դուրս քաշէին անտեսական ծանր կացութիւնից։

Պատմեցի, թէ ինչ դժուարութեամբ աջողվեց ինձ կաթ ստանալ սերզատի համար, և կասկած յայտնեցի մեր աշխատանքի արդիւնաւէտութեան մասին։

— Ես շատ լաւ գիտեմ, — ասաց նա, — որ գիւղացին դժուարութեամբ պէտք է ընդունի անտեսութեան այս նոր ձևը։ Առ այժմ մեր նպատակը պիտի լինի անընդհատ փորձերով գաղափարը մտցնել նրա մէջ։ Մենք, ժամանակի ընթացքում, կը կոտրենք նրա յամառութիւնը։

Ապագան ցոյց տուեց, որ յամառ ժողովրդի յամառ զաւակը կատարեց իր խօսքը։

Իմ յետագայ շրջագայութիւնների ժամանակ այդ անդադրում մարդը կրնկակոխ հետևում էր ինձ և իմ գործնական պարապմունքները լրացնում գրոյցներով, դասախօսութիւններով։

Կանօնաւոր հունի մէջ դրված գործը կանգ չառաւ. նա լայնանում և աւելի ու աւելի լայն շրջաններ էր ընդգրկում։ Անցել է տասը տարի. սերմնացանը տեսնում էր արդէն իր ցանած սերմերի ուռճանալը, ծիլ տալը։

Այսօր մեր երկրի բազմաթիւ անկիւններում, դանդաղ, բայց հաստատուն կերպով զարգանում է մի կուլտուրա, որը լաւագոյն յուշարձանն է անդուլ աշխատաւորի, աշխատաւորի, որի կուռ, բայց զգոյշ և խոհեմ հարուածների տակ փշրվում, հալվում էին և՛ յամառութիւնը, և՛ կասկածը դէպի նրա կուլտուրական առաքելութիւնները։

Երբ հայ գիւղացին իր հաստատուն քայլերը կուղղի մեծ ճանապարհով, նա այնտեղ փոքրաթիւ արձանների շարքում պիտի տեսի և Ա. Քալանթարի արձանը։

Այն մեծ ճանապարհը հարթելիս ընկաւ նա ճակատը՝ քրտնած, մարմինը՝ վաստակած, բայց հոգին աննկուն։

Այսպէս են ընկնում աշխատանքի հերոսները։

Մ. Խանզադեան

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռուսէ, 5 նոյ. (ն. տ.)

Բօթաբեր հեռագիրը այսօր գուժեց մեզ յանկարծական մահը յարգելի խմբագրութեան նախանդամ Ա. Քալանթարին։ Այս անակնկալ և ցնցող լուրը տխրութեան ծայրայեղ տեսակովը պատեց ամէն անձք, որ «Մշակի» ուղղութեան ջերմ համակիր ու գաղափարակից ճանաչւած են, ինչպէս նաև ամերիկահայ գաղութին ողջամիտ դասակարգը անխտիր։

Խնդրե՛մ, ընդունեցէք իմ ցաւակցական անկեղծ զգացումներս «Մշակի» կրած ներկայ անփոխարինելի կորստեան առթիւ։ Ցարգանք ազգային մեծ գործիչի՝ Քալանթարի թարմ յիշատակին...։

«Մշակի» վշտակիր թղթակից՝
Մաղաք Գ. Պէրպէրեան

Մօսկվա, 6 նոյեմբ.

Պ. Հ. Առաքելեան,

Ողբում եմ ձեզ հետ «Մշակի» անխոնջ խմբագիր Ա. Քալանթարի անակնկալ մահը։ Դուք և Ա. Քալանթարը արժանի պահապանների նման ամբողջ 20 տարի շարունակ ջանասիրութեամբ աշխատում և փայփայում էիք երջանկայիշատակ Գ. Արծրունուց ձեզ աւանդ մնացած «Մշակը». դուք երկուսդ, իբրև ջանասէր դարբիններ, ամուր զարկում էիք այն սալին, որի վրա Գ. Արծրունին կռել էր «Մշակի» հիմքը. միացած ոյժերով էլ առաւել ամրացնում էիք այդ հոյակապ շինութեան գմբէթը, հաստատ համոզմունքով որ «Մշակը» դեռ շատ տարիներ պէտք է գոյութիւն ունենայ, որովհետև նրա գոյութիւնը կարևոր է, նրա հիմնական սկզբունքները մեծ են և վեհ։

Այժմ կը բարեմաղթեմ, որ Ա. Քալանթարի յաւերժացած մարդասէր ոգին ձեզ ոյժ և եռանդ ներշնչէ «Մշակը» անխափան առաջ տանելու։ Թամար Կաճկաճեան

Կ. Պօլիս, 4 նոյեմբեր

Խնդրում եմ իմ ցաւակցութիւնները ընդունել հանգուցեալ Ա. Քալանթարի մահվան առիթով։ Եգիպտոսի ու Թիֆլիսի մէջ սէպ պատահութիւններ ունեցայ նրա բարեսրտութիւնը դիտելու։ Մանկական փափկութիւն ու անմեղութիւն ունէր իր յարբերութեան մէջ։ Վստահ եմ, որ ձեր երկրում և նոյնիսկ նրա սահմաններից դուրս շատեր, մանաւանդ երկրագործ դասակարգից, պիտի ողբան նրա կորուստը իբրև իրանց ամենամօտ ազգականի մահը։ Խընդրում եմ իմ ցաւակցութիւնը յայտնել հանգուցեալի վշտակիր գերդաստանին։

Դոկտ. Զավրիւ-խան

—

Պարիզ, 14 նոյեմբ. (ն. տ.)

Խորապէս յուզված Ալէքսանդր Քալանթարի վաղաժամ մահից, յայտնում եմ անկեղծ ցաւակցութիւններս վշտաբեկ խըմբագրութեանդ։ Ց. Տէր-Մարկոսեանի մահից յետոյ՝ սա երկրորդ դառն և էն ծանր հարուածն է, որ կրում է «Մշակը»։ Յանձին ողբացեալ Ալէքսանդր Քալանթարի, հայ մտաւորականութիւնը կորցնում է գըրչի ու գործի իր փայլուն ներկայացուցչին։

Ե. Սաֆրաստ

—

Վան, 24 հոկտ.

Պարզ ապշութիւն պատճառեց մեզ այն հեռագիրը, որ գուժում էր Ալ. Քալանթարի անակնկալ մահը. միթէ կարելի է այդ, միթէ իրօք այլ ևս չի ապրում այն մարդը, որ ինքը համակ գործունէութիւն էր, յամառ աշխատող ու անընձկելի, աննկուն մի գործիչ, որի վրա ամենքս հիանում էինք։

Յիշում եմ այն օրերը, երբ Ալէքսանդրը՝ աւարտած իր համալսարանական ընթացքը՝ վերադարձել էր Թիֆլիս, որպէս մասնագէտ գիւղատնտես. Արծրունին ողջունում էր նրա գալուստը, յայտնում էր նրան իր ու «Մշակի» համակրանքը և քաջալերում էր առաջ նետվել կեանքի ասպարէզում ու տնտեսական նուաճումներ անել կեանքում. այն օրից «Մշակի» էջերը լայն բացվեցին նրա առաջ ու նա մնաց միշտ համակրող ու բարեկամ այդ թերթին, իսկ Արծրունու մահից յետոյ՝ նրա գլխաւոր դրօշակակիրներից մէկը։

Ալ. Քալանթարի մահը մի անսպասելի, շշմեցնող, նաև անփոխարինելի կորուստ է «Մշակի» համար. Տէր-Մարկոսեանի կորուստը դեռ չը մոռացված, նրա թողած վիհը դեռ չը լցված, Քալանթարի մահը գալիս է ահա մեծ, սարսափելի մի վիհ ևս բանալու, որը փակել շատ դժուար պէտք է լինի թերթի համար, եթէ ոչ անհնարին։

Սակայն միայն «Մշակը» չէ, որ անփոխարինելի կորուստ է ունենում Թանգագին, կորովի վետերանի մահով, այլ ամբողջ ազգը. ո՞վ պէտք է այսուհետև կառավարէ գիւղատնտեսական դասընթացքները, աշխատանոցներն ու զրոյցները. ո՞վ պէտք է ղեկավարէ տնայնագործական աշխատանքները. ո՞վ պէտք է գիտական ճանապարհորդութիւններ կատարէ ու հայ ժողովրդին ծանօթացնէ գիտական աշխարհի նորութիւններին ու գիտութեան նորանոր նուաճումներին. ո՞վ, ո՞վ. ահա այս հարցերն ենք տալիս մենք շշմած ու ոչ մէկ մխիթարութիւն չենք կարող գտնել։

Յարգանք աննկուն վետերանի աճիւններին ու յաւիտենական հանգիստ՝ նրա խոնջած ոսկորներին։

Մորակ

Տրապիզօն, 5 նոյեմբ.

Բարի և յարգելի ուսուցչիս՝ Ալ. Քալանթարի տխուր մահվան առիթով իմ սրտի ցաւը միացնում եմ խմբագրութեանդ կրած ծով ցաւի հետ։

Թող ապրի յիշատակը այն մարդու, որ ուզեց շէնցնել արտը հայ շինականի, դալարեցնել նրա այգին ու ջամբել գիտութեան լոյսը հողի ժողովրդին։

Թող շատ ապրի յիշատակը այն ալևոր հասարակական գործչի, որի կեանքը գըրչով ու գործով նուիրվեց ժողովրդի բարօյական ու տնտեսական ցաւերին, կարիքներին։

Պիտի յաւիտեան ապրի յիշատակը բարի Ալ. Քալանթարի, որ աշխատեց արօրի փառքը երգելով և ընկաւ աշխատանքի ճամբուն վրա՝ քրտնած ու վաստակաբեկ։

Ց. Տումանեան

ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

—

Ալ. Քալանթարի մահվան առիթով խըմբագրութեանս ցաւակցական գրութիւններ են ուղղել ի միջի այլոց և հետևեալ անձինք.

Թախտաբազարից՝ Յակ. Բեջանեան, եղբ. Տէր-Սարգսեաններ, Աբէլ Ղալալեան։

Շուշից՝ Այգեգործ Գր. Տէր-Աւետիքեան, Արշակ Աղամալեան, Շուշանիկ Դանիէլեան։

Սամարղանդից՝ Ա. Յովհաննիսեանց (Թաւրիզեցի), Դ. Խաչատրեան, Լ. Հայրապետեան, Վարդան Ստ. Յովհաննիսեան, Ն. Նազարեան։

Շահնազար գիւղից (Թիֆլիսի շրջ.)՝ Պ. Նազլճեան, Հ. Ս. Ջ. Նազլճեան։

Հին-Նախիջևանից՝ Խ. Սաղաթէլեան, Ալէքսանդր և Վարվառէ Պաքզեաններ, օր. Լ. Տէր-Ստեփանոսեան։

Շխմահմուդ գիւղից (Հին-Նախիջ. գաւ.) ի դիմաց հասարակութեան՝ ուսուցիչ Բ. Կախեան։

Թիֆլիսից՝ Կարապետ Գ. Ղազարեան, Պետրոս Ս. Պուրնազեան, Յովակիմ Պ. Պալըխաճեան, Յովհաննէս Պ. Ջուղուկեան, Սաթենիկ Անդրէասեան, Աւ. Խաչատրեան, Մկրտիչ Մարգարեան։

Ռոստովից (Դ./Վ.)՝ Մ. Աւագեան, Գարեգին Աղպողեանեանց, Դաւիթ Նալբանդեան, ի դիմաց հայ աքսորականների՝ Գարեգին Խումարեան (գրաշար)։

Սղնախից՝ Սարգիս քահ. Ասլանբեգեանց, Մկրտիչ Բարխուդարեան, Արշակ ա. ք. Տէր-Ստեփանեան։

Բաշ գիւղից (Երևան)՝ ի դիմաց հասարակութեան Բալաբէգ Տէր-Գրիգորեանց, ի դիմաց «Զարաշխ» դպրոցի հոգաբարձութեան և մանկավարժ. կազմի Գր. Բալասանեան։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ, ՄԵԾ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԹՈՒՐՔԻԱ

—

Լոնդոն, 28 հոկտեմբերի

Ինչ չափով որ պարզվում է միջազգային դիպլօմատիայի մռայլ հօրիզօնը, նոյնչափով և առօրեայ հերթական հարցերը ստանում են այժմէութիւն և յարաբերաբար որոշ կերպարանք։

Բօլգարօ-Թիւրք հաշտութեան կնքումից յետոյ, սկսվեցին Թիւրք-յունական բանակցութիւնները խաղաղ ընթացքով. երկու կողմերն էլ ցոյց էին տալիս պատերազմից յոգնածի և սպառածի վերաբերմունք և արին փոխադարձ զիջողութիւններ, որոնց հետևեց հաշտութեան կնքումը, մանաւանդ որ Յունաստանը ընդունեց հպատակութեան, ազգային իրաւունքների և էվկաֆի կարևոր հարցերում Թիւրքիայի տեսակէտը։

Մասնաւորապէս մի քանի օրից ի վեր անգլ. կարևոր թերթերը բովանդակում են առատ լուրեր հայկական հարցի մասին, թէև այդ տեղեկութիւնները յաճախ չեն համաձայնվում երբեմն էական կէտերում, և աւելի յաճախ մանրամասներում, սակայն կարելի է յանգել մի դրական եզրակացութեան. դա այն է, որ հայկական հարցը այժմ արդէն առարկայ է պետութիւնների ուշադրութեան և գաղտնի բանակցութիւնների։

Այս ասելով հանդերձ, անհրաժեշտ է կարծել, որ ապագայ յուսախաբութիւնների և հաւանական ձախողութիւնների հանդէպ պաշարիւն մնալու համար պիտի գիտենալ որոշապէս, որ պետութիւնները ուշադրութեան առարկայ են դարձնում հայկական ռէֆորմների հարցը ոչ թէ հայերի կեանքի և ապահովութեան սիրոյն, այլ իրանց փոխադարձ շահերի և ֆինանսական ազդեցութիւնների շրջանակները որոշելու ու ապագայ գործունէութեան հիմքերը ամրացնելու համար։ Սրանից հետևում է, որ պետութիւնների միջև անհամաձայնութիւն և հակամարտութիւն ծագելիս—փաստերը դեռ որոշ չեն և գուցէ աւելի խառնակ—հայերը նորից կարող են զոհվել թիւրքական անբուժելի անարխիային։ Ուրեմն առ այժմ քիչ պէտք է յուսալ՝ յետոյ դառնապէս չը յուսախաբվելու համար։

Ընթերցողը գուցէ ծանօթ է այն իրողութեան, որ անգլիական և թերևս աշխարհի ամենամեծ և վստահելի օրգանը՝ «Times» պաշտօնապէս ներկայացնում է Անգլիայի արտաքին աշխարհավարութեան ուղղութիւնը, ինչպէս նաև ամենահեղինակաւոր աղբիւրը միւս պետութիւնների փոխ-յարաբերութիւնների և բանակցութիւնների վերաբերմամբ։ Վերջերս նրա սիւնակները լի են հայկական հարցին վերաբերող հայեացքներով։ Այս օրերս էլ նրա Պարիզի թղթակիցը հաղորդեց, որ պ. Սազօնով Պարիզում ֆրանսիական կառավարութեան հետ աջող բանակցութիւններ կատարելուց յետոյ՝ Բեռլինում էլ համաձայնութեան է եկել գերմանական կառավարութեան հետ հայկական երկաթուղիների, գծերի բաժանման և հայկական ռէֆորմների մասին։ Մի քանի օր առաջ էլ նրա Պոլսի թղթակիցը հաղորդում էր, որ Գերմանիան և Ռուսաստանը համաձայնել են հայկական վեց վիլայէթները բաժանելու երկու շրջանների, երկու ընդհանուր կառավարիչներով, որոնք իրանց իրաւասութեան տակ պիտի ունենան եւրոպացի սպէցիալիստների մի մեծ խումբ՝ բարեկարգելու Հայաստանը։ Միաժամանակ նա հաղորդում էր, որ Ռուսաստանը վայելում է Անգլիայի և Ֆրանսիայի աջակցութիւնը իր բանակցութիւնների ընթացքում, և թէ Բ. Դուռը սարսափած այս աջող բանակցութիւնների ընթացքից՝ մտադրվում է սարքել մի անակնկալ, մի գեղեցիկ առաւօտ նշանակել մի իսլամ վալի հայկական վեց վիլայէթների համար և դրանով պետութիւններին դնելով մի fait-accompli-ի առաջ՝ փորձել նրանց «անկեղծ» համերաշխութեան չափը։

Իսկ «Times»-ի վերջին համարներից մէկը բովանդակում էր մի երկար խմբագրական յօդուած «Հայկական ռէֆորմներ» վերնագրով։ Խմբագրութիւնը յոյս է յայտնում, որ Կ. Պոլսից հասած յիշեալ վերջին լուրը չի ներկայացնում օսմ. կառավարութեան դիտաւորութիւնները, այն է՝ կանխել պետութիւնների առաջարկները հայկական նահանգների համար՝ նշանակելով մի իսլամ վալի։

«Թէ հայկական հարցը վերջերս լուրջ առարկայ է եղել դիպլօմատիայի ուշադրութեան, Կ. Պոլսի դեսպանները պատրաստել են ռէֆորմների մի ծրագիր, որին հաւանութիւն յայտնել են վեց պետութիւնները։ Մի հարց է դա, որ շահագըրգռում է և բովանդակ Եւրոպային, այլ ոչ թէ միայն Թիւրքիային և որևէ բանակցող պետութեան։ Այդ մասին շատ որոշ յայտարարութիւններ արեց պարլամենտում մեր արտաքին գործերի մինիստր սըր Գրէյ անցեալ մայիսին, Բոլոր երկիրների, ինչպէս Հին և Երիտասարդ Թիւրքիայի հասկացող դիպլօմատները,—գրում է թերթը,—այժմ ըմբռնում են, որ եթէ հայկական հարցը չը ստանայ գոհացուցիչ և անմիջական լուծում, դա կարող է առնել մակեդօնական հարցի լուծման ճանապարհը, ինչ որ աղէտալի հետեւանքներ կունենայ Թիւրքիայի համար։

«Մի սերունդ առաջ հայերը Թիւրքիայում կայացնում էին «միլլէթի-սադըքա»—հաւատարիմ, լոյալ ժողովուրդ—և այդ անունով զանազանվում էին յոյներից, բօլգարներից և ուրիշ գաւառներից, որոնք ընդունակ էին ապստամբելու. Նրանք (հայերը) վայելում են դեռ որոշ առանձնաշնորհութիւններ, որոնց մեծապէս գնահատում են և հաւատում են, որ պէտք է չը կարողանան անպարտ պահել ուրիշ երկրի հովանաւորութեան ներքոյ։ Նրանք ընդհանուր քուէարկութեամբ ընտրում են իրանց կրօնական ու աշխարհական (քաղաքական ի հարկէ) ժողովները՝ աջակցելու լուսաւորչական պատրիարքին, և «միլլէթի» միւս պաշտօնեաներին։ Նրանք տնօրինում են իրանց ամուսնութիւնների օրինականութիւնը, կառավարում են իրանց եկեղեցիները, դըպրոցները, հիւանդանոցները և այլն, և անարգել խօսում են իրանց լեզուն, և հակառակ հարկահանին և քիւրդին՝ նրանցից շատերը դիզում են մեծ հարստութիւն փոխատուութեամբ և առևտրով։ Նրանք Թիւրքիայից դուրս հայրենիք չունեն, և քանի թիւրքերը նրանց տալիս էին կեանքի և սեփականութեան որոշ ապահովութիւն, նրանք գոհ էին։

«Թիւրք քաղաքագէտները առաջնակարգ պարտաւորութիւն պէտք է համարեն իրանց համար՝ նրանց փոխելու կայսրութեան գոհ քաղաքացիներ։ Նրանց պահանջները անգամ Ստամբոլի ականջով չը պէտք է դատել անբանաւոր։ Ագիտատօրներ ու պօլիտիկոսներ կարող են ցանկալ անհնարին առանձնաշնորհներ, սակայն այդ խաղաղ ու ճարտար ցեղի մասսան, զանգուածը ամեն հաւանականութեամբ կը գոհանայ կեանքի և սեփականութեան բաւարար պաշտպանութեամբ, վայելելով նաև իրանց արդէն ստացած առանձնաշնորհները։ Նրանք հաւատարմութեամբ կռուեցին սուլթանի բանակներում բալկանեան պատերազմում. դա ցոյց է տալիս, որ նրանք չեն ցանկանում թիւրքական լուծը արտաքսել։ Սակայն թիւրքերը պէտք է չը վստահանան նրանց համբերողութեան։ Չէ կարելի նրանցից ակնկալել, որ աւելի երկար կրեն անիրաւութիւնները, որոնց պարբերապէս ենթարկվել են տարիներից ի վեր. նրանք պէտք է ստանան ապահովութիւն իրանց կեանքերի և ընչի համար, պէտք է ազատվեն ջարդի և կողոպուտի յաւիտենական մղձաւանջից. նրանց պէտք է տրվի մի արդար և լուսամիտ վարչութիւն. Նրանք երկար ժամանակ վայելել են այդ երաշխութիւնները թղթի վրա՝ առանց որևէ իրական բարւոքումի իրանց իսկական դրութեան մէջ. այս անգամ նրանք վճռել են թղթեայ ռէֆորմները իրողութիւնների վերածել միակ ազդու կերպով. Նրանք պահանջում են միջազգային կօնտրօլ, որ նրանք իրաւացիօրէն այդ նկատում են անհրաժեշտ, ընդունում են պետութիւնները և բոլոր նրանք, որոնք ճանաչում են Թիւրքիային։ Ռէֆորմների իրականացումը վըստահել թիւրք վալիի կամ Թիւրքիային թէկուզ եւրոպացի «օժանդակներով» և խորհրդականներով՝ նշանակում է գործը սկզբից ամլութեան դատապարտել։

«Գործնական ռէֆորմները յապաղելու դէպքում, անխուսափելիօրէն հետևելու են խառնակութիւններ, մի բան՝ որ չեն ցանկանում պետութիւնները, որոնք սակայն ամենալուրջ վտանգ պիտի լինեն Ասիական Թիւրքիայի գոյութեան։ Այդպիսի մի պատահականութիւն կարող է առիթ տալ առանձին պետութիւններին՝ օգտվել հանգամանքից։ Իթթիհադի մի հատուածը խորապէս համոզվել է այսպիսի մի հնարաւորութեան։ Մենք յոյս ունենք, որ նրանք չեն ենթարկվի մի քանի շովինիստների, որոնք քաջալերված՝ վերջին չնչին աջողութիւններից Եդիրնէում՝ կարող են փորձվել պետութիւնների և հայերի մէջքին աւելացնել թղթեայ ռէֆորմների մի ուրիշ կապոց։ Այդպիսի մի փորձ ապահովաբար կունենայ շատ վատ հետևանք։ Դա զրկելու է Թիւրքիային Եւրոպայի համակրութիւնից և ֆինանսական օգնութիւնից, որոնք անհրաժեշտ են նրան իր ասիական կայսրութեան պահպանման համար։ Դա պիտի յուսախաբի և կատաղեցնի հայերին և պիտի թելադրի նրանցից շատերին օգնութիւն որոնել սահմաններից միւս կողմը։ Անցեալում Թիւր-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ *)

V

Ազգային-կուլտուրական աւտօնօմիան ազգային աւտօնօմիայի մի մասն է։ Ազգային աւտօնօմ մարմինների իրաւասութեան պատկանող հարցերի շարքից վերացվում են սոսկ ազգային կուլտուրական պէտքերը և նրանց ապահովութեան ու պաշտպանութեան համար ստեղծվում են համապատասխան հիմնարկութիւններ, որ միանգամայն աւտօնօմ են և կապված են այն ազգութեան և նրա անխտիր բոլոր հատուածների ու ցիրուցան անդամների հետ, որի կուլտուրական պէտքերի համար կեանքի են հրաւիրված նրանք։ Այսպէս՝ միջազգային յարաբերութիւնների, ֆինանսների, պօստի, աշխատանքի, երկրագործութեան և այլն հարցերով կը զբաղվի կենտրօնական իշխանութիւնը իր օրգաններով, իսկ զուտ ազգային-կուլտուրական կարիքները կը յանձնվեն ազգային օրէնսդրական ու վարչական մարմիններին։ Այս դէպքում, օրինակ, Ռուսաստանը ունենալով հանդերձ իր կենտրօնական պարլամենտը, կենտրօնական վարչութիւն, տեղական պետական իշխանութիւններն ու ինքնավարութիւնները՝ միւս կողմից պատած կը լինի ազգային-կուլտուրական մի շարք աւտօնօմ հիմնարկութիւնների ցանցով, ինչպէս՝ լեհական, մօլդավական, ռուսական, թաթարական, վրացական, բաշկիրական և այլն և այլն։

Ի՞նչ պայմաններ կարող էր առաջ բերել ազգային-կուլտուրական աւտօնօմիայի գաղափարը։

Նրա հեղինակները Ռուսաստանում համարվում են բունդիստները՝ հրէական բանուորական միութիւնը։ Հրէայ բանւորութիւնը իր տնտեսական-հասարակական դիրքով ընտիր բանւորութիւն չէ. նա իր ճնշող մեծամասնութեամբ մանր ձեռնարկութիւնների և արհեստանոցների աշխատաւորներից է բաղկացած. խոշոր-արդիւնագործական բանւորութիւն չէ հրէայ բանւորութիւնը։ Այդ իսկ պատճառով ազգային իդէօլօգիայի ազդեցութիւնը նրա վրա զգալի է աւելի քան, մանաւանդ որ հրէութիւնը մեզ մօտ ներկայացնում է միանգամայն իրաւազուրկ տարր. նա վաղուց հետէ կրում է հալածականի դժնդակ լուծը։ Չը կայ մի անկիւն, որտեղ չը լսվի հրէայի հեծեծանքը. չը կայ մի բռունցք, որ ուղղված չը լինի գլխին։ Հրէական հալածանքները մի անծայր մարտիրոսագրութիւն են, պերճախօս ու ցաւատանջ մարտիրոսագրութիւն. արդեօք մի այլ ցեղ կը դիմանա՞ր այն ամեն արգելքներին ու չարչարանքներին, որոնց ենթարկված է եղել ու ենթարկվում է Իսրայէլի սերունդը։

Ի՞նչ կարող էր լինել այդ ամենքի հետևանքը։ Հրէութեան կազմակերպումը յանուն իր մարդկային իրաւունքների պաշտպանութեան. այդ կազմակերպումը տեղի էր ունենում ազգային դրօշակի տակ. դա ամենամատչելի դրօշակն էր, թէև հրէութեան հասուն ու հեռատես տարրերը անցնում էին համամարդկային, համայն ճնշվողների շարքերը։

Բայց ինչ կարող էր տալ հրէաներին իրանց ազգային դրօշակը, քանի որ նա տարբերվում է այլ ազգային դրօշակներից։ Այդ տարբերութիւնը բղխում է հրէութեան հասարակական դիրքից։ Ներկայացնում է արդեօք այսօր հրէութիւնը ազգ և ազգութիւն այդ բառերի ժամանակակից իմաստով։ Կա՞յ արդեօք հրէայ ազգ։ Ոմանք պատասխանում են, թէ կայ, իսկ ոմանք՝ թէ չը կայ։ Ինչո՞ւ չը կայ։ Որովհետև հրէութեան կեանքում ազգի գործօններից գլխաւորագոյնները՝ տերրիտօրիան ու լեզուն բացակայում են։ Հրէան ցիրուցան է եղած երկրի երեսին. նա չունի հողին կըպված դասակարգ՝ գիւղացիութիւն, ազգի այդ հում նիւթը. իսկ հրէական ժարգօնը լեզու չէ։ Չէ կարելի լուրջ կերպով խօսել և հրէական գրականութեան մասին։ Մնում է մի ընդհանուր, շատ ընդհանուր մեծութիւն՝ հրէական կուլտուրան, ինչպէս և պատմական աւանդութիւնները. սակայն դրանք չեն կարող գաղափար տալ ժամանակակից ազգի ու ազգութեան մասին։ Հրէան ունի կրօն, իսկ կրօնը ազգային գործօն չէ. այդ տեսակէտից հրէութիւնը աւելի շուտ մի կրօնական համայնք է։

Չը կայ հրէայ ազգ ներկայիս իմաստով, չը կայ և հրէական ազգային ծրագիր այլ ազգերի ծրագիրների նման։ Ֆեդերացիա կամ հողային աւտօնօմիա՝ դրանք հրէութեան համար ոչ-ձեռնտու, ոչ-կիրառելի լուծումներ են։ Այդ է պատճառը, որ հրէական ձախակողմեան հոսանքների ծրագիրներում տեղ ունի ազգային կամ մի խօսքով ոչ-հողային աւտօնօմիայի պահանջը։ Ազգային ծրագիր տալու տենդով բռնված բունդիստները դեռ շատ-շատերից առաջ գնացին այդ ուղղութեամբ ու մշակեցին ոչ-հողային աւտօնօմիաներից մէկը, ամենաճկունը և իբր թէ ամենաանխոցելին. դա ազգային-կուլտուրական աւտօնօմիան է, որ այսօր աղմուկ է հանել, որին այսօր, որպէս «նորութեան», «հնից» ձանձրացածները ուժգնօրէն փարում են։

Ազգային-կուլտուրական աւտօնօմիաները իրանց հովանաւորութեան տակ են վերցնում ազգի սոսկ հոգևոր-կուլտուրական պէտքերը, որպիսիք են. 1) լեզուն, 2) մամուլն ու գրականութիւնը, 3) թատրոնը, 4) գրա-հնա-պատկերադարանները, 5) կուլտուրական միութիւնները, 6) դպրոցը և 7) այլ կուլտուրական պէտքերն ու սովորութիւնները։

Լեզուն խոշոր կուլտուրական գործօն է։ Նա չը պէտք է ենթարկվի ոչ մի ճնշման ու հալածանքի, որովհետև նա մտաւոր ու հոգևոր հաղորդակցութեան միջոց է։ Բանդեցէք երկաթուղիները, և կը բեկբեկվի առևտուրը, կը քայքայվի տնտեսական կեանքը։ Այլ խնդիր է, ի հարկէ, թէ հաղորդակցութեան էլեքտրաշարժ միջոցները աւելի բարձր են հաղորդակցութեան շոգեշարժ միջոցներից. քանի դեռ գործում է շոգեշարժը, նրա քաղաքակրթական դերը անժխտելի է։ Նմանապէս և այլ խնդիր է, թէ մի լեզու ստոր է, յետամնաց է մի ուրիշից. քանի այդ ստոր համարված լեզուն դեռ ընդունակ է հասարակութեան զարգացմանը ծառայելու՝ նրա դրական դերը անժխտելի է. իսկ հենց որ նա կանգնի կեանքի առաջընթացութեան դիմաց, նա կը կորցնի իր արժէքը, և նրա տեղը կը բռնի աւելի ուժեղ, աւելի կենսունակ լեզուն։

Մենք չենք ջատագովում ազգային լեզուն, մենք և ոչինչ չունենք նրա դէմ, եթէ նա նպաստում է ազգի մասնակցութեանը քաղաքակրթութեան գործին, և մենք չենք կարող չընդդիմանալ այն պատնէշին, որ քաշվում է լեզուի առաջ. որպէս սկզբունքային պայքարողներ ընդդէմ ամեն մի բռնութեան՝ չենք կարող մենք մեր պաշտպանութեան ձայնը չը բարձրացնել, երբ մի ազգի լեզուն արհեստական կերպով հալածվում ու հարուածվում է։

Դա մեր ծրագրի կարևոր կէտերից մէկն է. դա մեր ընդհանուր քաղաքականութեան էական քայլերից մէկն է։ Թէ չէ՝ ի՞նչ մի առանձնայատուկ կողմ պէտք է ունենայ այդ պաշտպանութիւնը. ինչո՞ւ նա պէտք է մի առանձին ազգային պահանջ կազմէ. չէ՞ որ նա ընդհանուր է և մի այնպիսի հարց չէ, որ մտահոգելի լինի սոսկ ո՞րոշ ազգի ներկայացուցիչներին, որ չը կարողանայ լուծել պետութեան համայն ռամկավարութիւնը։ Ինչո՞ւ այս վերջինս յայտարարում է բոլորի համար խղճի ազատութեան սկզբունքը, և ամենքը համաձայնում են այն հանուր ռամկավարութեան հսկողութեան յանձնել. միթէ խղճի ազատութեան խնդիրը չի մտնում «ազգային» սահմաններին. միթէ նա չի վերաբերում մահմեդական, հրէական, հայկական կամ ուղղափառ դաւանանքներին ու կրօններին։

Ռուսաստանի հետևողական ռամկավարականները մայրենի լեզուի իրաւունքի հարցը դրել են լայն կերպով. այսպէս, մարքսիստների ծրագիրը շեշտում է ազգաբնակութեան իրաւունքը կրթութիւն ստանալ իր մայրենի լեզուով, իւրաքանչիւր քաղաքացու իրաւունքը՝ բացատրվել իր մայրենի լեզուով ժողովներում. մայրենի լեզուի գործածութիւնը բոլոր տեղական հասարակական ու պետական հիմնարկութիւններում համահաւասար պետական լեզուի։ Այս միևնոյնը ընդունում են և հայ-մարքսիստները։ Սա համապետական պահանջ է և կարող է իրականանալ համապետական միջոցներով։ Անշուշտ, նրա իրականացումը կախված է պետական կազմի իսկական ռամկավարացումից, որը sine qua non է կազմում այդ պահանջի՝ այն փոքր ռամկավար տարրերի տեսակէտից։

Մամուլ և գրականութիւն։ Վերջինս զարգանում է իր, այսպէս ասած, իմմանենտ օրէնքներով, որ անկախ են արտաքին արգելաքիթ պայմաններից. սակայն, ի հարկէ, նրա խաղաղ զարգացմանը կարող են խանգարել և քաղաքական արգելքները, որոնց ներգործութիւնը մեծ է մանաւանդ մամուլի վրա։ Բայց ո՞ր մամուլը հեռու է այդ արգելքներից. հենց պետականօրէն տիրապետող ազգի մամուլը իր լաւ մասով այսօր ամենադաժան ճնշումների է ենթակայ։ Պատճառը քաղաքական մարմինն է՝ անկախ այս կամ այն ազգային քաղաքականութիւնից։ Եթէ երկրի սահմանադրութիւնը չէ սանձահարում վարչական մեխանիզմը, ապա մամուլի դրութիւնը միշտ էլ կը լինի վատ, որքան կուզէք դուք պատեցէք նրան զանազան ազգային-կուլտուրական աւտօնօմիաների ցանցով։

Մամուլի և գրականութեան հարցը համապետական հարց է. այստեղ չը կայ ազգային խտրութիւն, չը կան ազգային առանձնայատուկ պայմաններ։ Բացի այդ՝ մանր ազգերի մամուլը մեզ մօտ չէ ճնշվում այնպէս, ինչպէս ճնշվում է տիրապետող ազգի մամուլը. ճշմարտութիւնը ստիպում է խոստովանել, որ այսօր Ռուսաստանում ծայրագաւառների մամուլի դրութիւնը, համեմատած կենտրօնի հետ, աւելի լաւ է։

Թւում է, թէ թատրօնի նկատմամբ էլ չը կայ մի առանձին «ազգային» քաղաքականութիւն, թէ նրա զարգացումը իւրաքանչիւր ազգի կեանքում կախված է այդ ազգի հոգևոր պաշարից, ներքին ազդակներից. հա, կարող է պատահել, որ ազգային թատրօնի շէնքի կառուցման կամ ազգային թատրօնական ֆօնդ հիմնելուն կառավարութիւնը արգելք հանդիսանայ։ Իսկ ռամկավար, թէկուզ ամենանուազ ռամկավար կարգերում ինչո՞ւ պիտի յարուցանվեն այդպիսի խոչընդոտներ. ընդհակառակը, պետութեան կենտրօնական մարմիններին ձեռնտու կը լինի, եթէ մանր ազգերից ամեն մէկը ուզենայ իր թատրօնի պէտքերը ինքը հոգալ. ոչ մի խնդիր նոյն իսկ աշխատանքի այդօրինակ բաժանման առաջը չի կանգնի։

---

*) Տես «Մշակ» № 254.

քերի յենակէտը եղել է այն, որ որքան էլ հայերը հալածվում էին իրանցից, գոնէ իրանց եկեղեցին և ազգութիւնը ազատ էին զգում, որ արեւելեան ժողովուրդներում անբաժանելիօրէն իրար զոդված են: Վերջին ժամանակներում, սակայն, Թիւրքահայերից շատերը յուսադրված՝ ռուսական բարեփոխված վերաբերմունքից—մասնաւորապէս կոմս Վորոնցով-Դաշկովի հիանալի վարչութիւնից—տրամադրվել են սահմաններից այն կողմը իրանց ազգակիցների դրութիւնը նկատել երջանիկ և ապահով՝ քան իրանցը:

«Թիւրքահայերը գերադաս են համարում միայն «հաւատարիմ միլլէթ», եթէ միայն նրանց հաւատարմութիւնը չը փորձեն խորտակելու կէտի վրա: Ուղիղ է, փորձեր պէտք է մտնեն եւրոպական գործակիր մարմնի կոնտրօլի տակ: Սա մի դարման է, որ կարող է բաղխվել երիտասարդ-Թիւրք վարդապետութիւններին, սակայն երիտասարդ-Թիւրքերը կարող են այժմ տեսնել դրանց արդիւնքը Մակեդոնիայում և Ալբանիայում:

«Հայերը դեռ կարող են լինել կամ թանկագին մի տարր վերածնված Թիւրք պետութեան մէջ, և կամ ապստամբութեան և խռովութիւնների մի վարակող օրինակ. վճիռը կախված է Թիւրք կառավարութիւնից և նրան վարող կուսակցութիւնից»:

Ես տուի «Times» լրագրի առաջնորդողի մտքերը, առանց մի խօսք աւելացնելու իմ կողմից: Թիւրքահայերը իրաւունք ունեն յուսալու, որ Թիւրքերը պիտի լսեն «Times»-ի լուրջ խորհուրդներին:

«Daily Telegraph» Թերթն ևս նորից անդրադառնում է հայկական հարցին: Նրա Պոլսի Թղթակիցը մի երկար հեռագրով պարզում է Անգլիայի վերաբերմունքը հանդէպ Թիւրք բարենորոգչական շարժումին:

Նրա ասելով, Թիւրքիան ամիսներ առաջ Անգլիայից խնդրել է զինուորական և քաղաքացիական «սպէցիալիստներ»՝ բարեկարգելու Թիւրքական բովանդակ վարչութիւնը: Թիւրքիան ջերմապէս համոզվել էր, որ Անգլիան ուրախութեամբ կը պատասխանի իր խնդիրքին՝ հիմնվելով աւանդական բարեկամութեան (Ղրիմի պատերազմը) և դաշնագրական յանձնառութիւնների (Կիպրոսի) յօյսերի վրա: Սակայն, ինչպէս երեւում է, Անգլիան երկար վարանումից յետոյ մերժել է Թիւրքիայի խնդիրքը, անգամ Թիւրքիայի ծառայութեան մէջ գտնվող անգլիացի պաշտօնեաների — ինչպէս Ռօբըրթ Կրէյվզայն — օժանդակութիւնը տալ: Թիւրքերը հաւատում են ի լուր աշխարհի՝ որ իրանք մեծապէս յուսախաբ են եղել իրանց ջանքերի հանդէպ Անգլիայի ցոյց տուած անտարբերութիւնից, և մի Թիւրք հեղինակաւոր պաշտօնեայ խոստովանել է «Daily «Telegprah»-ի Թղթակցին Թիւրք շրջաններում տիրող կարծիքի մասին: Այդ անանուն Թիւրքն ասել է, որ Անգլիան մերժում է խորհրդականներ տալ Թիւրքիային, որպէսզի Թիւրքիան մնայ միշտ խռոված և անբարեկարգ, և ուրեմն դիւրին որս մեծ պետութիւնների:

Ուժեղ մի Թիւրքիան յաւիտենական ներշնչումի աղբիւր է Հնդկաստանի իսլամներին, որոնք օրէ-ցօր աւելի տրամադրութիւն են ցոյց տալիս աչքերը դարձնել դէպի իսլամութեան խալիֆան: Դա նշանակում է, ասել է Թիւրքը, որ արդէն վճռվել է Թիւրք կայսրութեան բաժանումը, և Անգլիան ջանքեր է անում փութացնել անկումը, քանի դեռ իր ույժը չի վերստացել Ռուսաստանը, և Հիւանդ Մարդու ժառանգութիւնից նրան Թողնել այնչափ քիչ, որչափ հնարաւոր է:

Իմ կարծիքով՝ դա մի մեքենայութիւն է, մի Թիւրքական միջոց է արթնացնելու անգլ. իսլամների գիտակցութիւնը և նրանց միջոցով հարկադրելու Անգլիան աւելի գործօն մի քաղաքականութեան ի նպաստ Թիւրքիայի:

Պատճառներ կան հաւատալու, որ, եթէ իսկապէս Անգլիան մերժել է բարեկարգիչներ տալ Թիւրքիային, պատճառը պիտի որոնել մօտիկ անցեալի պատմութեան մէջ,—չը զարթեցնել Ռուսաստանի և վերջերս էլ Գերմանիայի նախանձը ներկայ քաղաքական հանգամանքներում:

Aequitas

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Շուշեցի Ալ. Բաղդասարեանից՝ ի յիշատակ իր հանգուցեալ քրոջ-Սոֆիա Յովսէփեանի՝ 25 ռուբ.: Նախորդ ստացվածների հետ միասին (տես «Մշակ» № 249) ունենք ստացած ընդամենը 67 ռուբլի:

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

Ես բնաւ չէի կարծում, որ Ս. Զաւարեանի անօթութիւնից մեռնելու դէպքը առիթ տար «Հօրիզօն» Թերթին այնպիսի դիրք բռնել այդ հարցի վերաբերմամբ, որպիսին նա ցոյց է տալիս իր երէկվայ համարում,—վերին աստիճանի անկօրեկտ և անարդար վերաբերմունք:

«Մշակը» այդ դէպքի մասին վաղուց ըստացել էր կողմնակի լուրեր և տեղեկութիւններ, բայց նա իրաւունք չէր համարում դնել խնդիրը հրապարակի վրա պատահական տեղեկութիւնների հիման վրա, և հարկ կայ աւելացնել, որ նա անհնարին էր համարում այդպիսի մի հրէշաւոր դէպք:

Սակայն Կ. Պոլսի իր սեփական Թղթակից Շառայլի նամակը, «Ազատամարտ» Թերթի մէջ տպված երեսփոխան Ն. Օհանեանի յօդուածը, վերջապէս Ա. Ա.-ի յօդուածը (որ «Հօրիզօնը» տպել է չորեքշաբթի օրվայ իր համարում և որի մի քանի կէտերի վերաբերմամբ ակնարկ կայ նաև Գրիգոր Զալխուշեանի յօդուածի մէջ՝ տպված «Մշակի» երէկվայ համարում) այլեւս ոչ մի կասկած չը Թողեցին, որ, արդարև, Ս. Զաւարեան մեռել է անօթութիւնից. իսկ երբ մի մարդ, մի նշանաւոր գործիչ, մեռնում է անօթութիւնից մի քաղաքում, ուր ունի բազմաթիւ կուսակցական ընկերներ և համակրողներ, պարզ է, որ նա լքված է եղել այդ կուսակցական ընկերներից և համակրողներից: Եւ այդ է պատճառը, որ պախարակելով Ս. Զաւարեանի կուսակցական ընկերների վարմունքը, մենք պախարակեցինք միևնոյն ժամանակ և՛ նրա ոչ-կուսակցական համակրողների վարմունքը, որոնք անհոգ էին գտնվել և չէին աշխատել տալ նրան որևէ պաշտօն, երբ նա դիմումն էր արել նրանց:

Մենք կարծում էինք, որ «Հօրիզօնը» մի պատասխան ունէր տալու մեզ և մի դիրք ունէր բռնելու այդ ամօթալի դէպքի վերաբերմամբ: Նա կամ պէտք է հերքէր փաստերով և ոչ լոկ խօսքերով՝ Թէ դէպքը բնաւ տեղի չէ ունեցել, կամ յեղաշրջված է կամ չափազանցված է, և կամ՝ ընդունելով եղելութիւնը՝ մեզ հետ միասին պահանջէր, որ ճշգրտվի իւրաքանչիւրի պատասխանատուութիւնը այդ հրէշաւոր դէպքի համար:

Բայց «Հօրիզօնը» այդպէս չէ վարվում: Նա ուրանալ չէ յանդգնում սոսկալի եղելութիւնը, բայց աշխատում է մեղմացնել զանազան պատրուակներով և անտեղի առարկութիւններով: Նախ, նա մեղադրում է մեզ, որ իբր կամեցել ենք այս սգի օրերում Թունաւորել հասարակութեան և Ս. Զաւարեանի ազգականների հանգիստը. երկրորդ, նա յայտնում է, որ Ս. Զաւարեան մերժել է օգտվել կուսակցական միջոցներից:

Ահա «Հօրիզօնի» առարկութեան և հերքման գլխաւոր կէտերը:

Բայց դրանք չեն դիմանում որևէ կրիտիկայի: Նախ՝ «Մշակը» իբրև հասարակական օրգան, իբրև արտայայտիչ հասարակական խղճմտանքի, բնաւ իրաւունք չունէր Թագցնել հասարակական և բարոյական նշանակութիւն ունեցող մի դէպք, նոյն իսկ եթէ դա վրդովէր հանգուցեալի ազգականների հանգիստը. երկրորդ, եթէ ընդունենք, որ, յիրաւի, Ս. Զաւարեան մերժել է կուսակցութեան օգնութիւնը, դա դեռ չէ արդարացնում կուսակցութեանը, քանի որ սա տեսնում էր իր քթի առաջ իր լիդէրներից մէկին սոսկալի չքաւորութեան մէջ և, հետևաբար, պարտաւոր էր գոնէ կողմնակի միջոցներով հայթայթել նրան փոքր ի շատէ տանելի ապրուստ. երրորդ, կուսակցութեան վրա ծանրանում է պատասխանատուութիւն նրա համար, որ նա պարտաւոր էր իր անդամների (Խաժակ և Զարդարեան) հալածանքները դադարեցնել և զսպել տալ, և եթէ, արդարև, ապացուցված է, որ այդ երկու անձինք գլխաւոր դեր են խաղացել Ս. Զաւարեանի հալածման մէջ, ենթարկել նրանց պատասխանատուութեան և դրանով ապացուցանել, որ կուսակցութիւնը համերաշխ չէ նրանց հետ:

Ուրեմն, սարեր-ձորեր չընկնենք. նայենք խնդրին պարզ և ուղղակի: Ս. Զաւարեան մեռել է անօթութիւնից. իբրև յանցաւորներ մեղադրվում են նրա կուսակցական ընկերները: Պէտք է կամ փաստերով ապացուցանել, որ դա սխալ է, կամ եթէ ճիշդ է, պատժել այդ յանցաւորներին: Վերջապէս, պէտք է պարզել խնդիրը, Թէ ով է յանցաւոր այդ ամօթալի դէպքի մէջ. պէտք է, որ մութ կէտ չը մնայ այդ խնդրի մէջ, պէտք է ամէն բան պարզ լինի հասարակութեան առաջ: Դա հերքումն չէ՝ ասել, Թէ Շառայլը և Հ. Առաքելեանը վստահութիւն վայելող մարդիկ չեն: Թողէք անձնաւորութիւնները. հերքեցէք փաստերը, եթէ կարող էք, և մի ընկնէք զանազան դռներ:

Ինչ վերաբերում է այն խնդրին, Թէ իբր «Մշակը» 5—6 տարի առաջ հալածել է Ս. Զաւարեանին, այդ փաստը ևս «Հօրիզօնը» յեղաշրջում է և զուր տեղ այդպիսի միջոցների և արդարացումների է դիմում: Այո, «Մշակը» եղել է հակառակորդ «Դաշնակցութիւն» կոչված կուսակցութեան, երբ սա ընդունեց ապազգային նոր ծրագիրը: Համարելով այդ կուսակցութեան վերջին տարիների գործունէութիւնը վնասակար հայ ժողովրդի համար, նա աշխատել է, որ այդ կուսակցութիւնը իր ցանցերը չը տարածէ հայ դպրոցներում: Նա բնաւ չէ ուրացել Ս. Զաւարեանի անձնական արժանիքը, այլ ասել է, որ ընդդէմ է նրան եթէ նա հանդէս է գալիս ազգային կրթութեան գործում իբրև կուսակցական գործիչ, իբրև դաշնակցական: Վերջապէս «Մշակի» կարծիքը բնաւ չէ զրկել Ս. Զաւարեանին որևէ պաշտօնից կամ տեղից: «Մշակը» բնաւ չէ դիմել այս և այն հաստատութեան և խնդրել, որ Ս. Զաւարեանին տեղ և պաշտօն չը տան: Այդ ամօթալի գործը կատարել են իր կուսակցական ընկերները: Ահա այդ պէտք է պարզաբանել, և եթէ պարզաբանված է ու ապացուցված, բայց այնուամենայնիւ այդ կուսակցական ընկերները շարունակում են կուսակցութեան մէջ ղեկավարողների դեր կատարել, այն ժամանակ մենք լիակատար իրաւունք ունենք ասելու, որ կուսակցութիւնն ևս յանցաւոր է:

Մենք բնաւ ախորժակ և նպատակ չունենք բանակռուի մէջ մտնել «Հօրիզօնի» հետ այս հարցի վերաբերմամբ: Մենք հրապարակի վրա դրել ենք մի կարևոր հարց—հասարակական խղճի յուզմունքը տեղի ունեցած մի ամօթալի վարմունքի մասին:

«Հօրիզօնը» իր հերքումներով միայն ապացուցեց, որ, արդարև, ամօթալի դէպքը տեղի է ունեցել. նա ոչ մի բան չը հերքեց, այլ աշխատեց վարագուրել, մեղմացնել: Նա, Թոյլ տուէք ինձ ասելու, վարվեց այն գողի նման, որ բարձրացել էր մի պարտէզի ծառի վրա և խնձոր էր գողանում, և երբ պարտէզի տէրը վրա հասաւ ու բռնեց նրան en delit flagrant, ու սկսեց յանդիմանել գողութեան համար, նա պատասխանեց. «Հապա ինչու դու կնոջդ համար նոր հագուստ չես առնում»:

Կամ հերքեցէք, կամ ընդունեցէք:

Շահրիար

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆՈՒԷՐԸ

Լրագիրներում կարդացի, որ Ալէքսանդր Մելիք-Ազարեանցն իր հոյակապ տան մէջ երկու շքեղ դահլիճներ յատկացրել է Թիֆլիսի նկարիչներին:

Այդտեղ նրանք կարող են բանալ ցուցահանդէսներ, ունենալ ժողովներ, երեկոյթներ, դասախօսութիւններ և այլն:

Գեղեցիկ նուէր նոյնչափ գեղեցիկ մի նպատակի համար: Ես որքան գիտեմ, Մելիք-Ազարեանցը առաջինն է մեր հարուստների մէջ, որ այդպիսի մի խելացի աջակցութիւն է ցոյց տալիս գեղեցիկ արուեստին: Մի աջակցութիւն, որ օրինակելի լինելուց զատ՝ և խրատական է շատերի համար:

Բայց ինչու միայն նկարիչները պիտի օգտվեն այդ գեղեցիկ նուէրից: Ինչու ոչ բոլոր արտիստները, այսինքն բոլոր այն անձինք, որոնց զբաղմունքը գեղեցիկ արուեստն է: Ինչու ոչ նոյն իսկ գրականութեամբ պարապողները:

Թիֆլիսը որքան էլ պարծենայ իր քաղաքակրթութեամբ, այնուամենայնիւ մի հեղձուցիչ վայր է արտիստի համար: Մի չոր անկիւն, ուր ամենադիմացկուն հոգին, որ կրում է իր մէջ ստեղծագործութեան երկնային կայծը, ընկճվում է, Թառամում տխուր միջավայրի կործանիչ ազդեցութիւնից:

Այստեղ արտիստը ստիպված է իր ազատ ժամերը ապրել արուեստների հետ ոչինչ կապ չունեցող, երբեմն նոյն իսկ նրանց Թշնամի շրջաններում, չունենալով իրան վայել և իր հոգեկան պահանջներին համապատասխան շրջաններ:

Քաղաքակիրթ երկիրների ամենափոքր վայրերում անգամ կան գեղարուեստական կամ գրական սալոններ, հասարակական Թէ մասնաւոր, ուր արտիստը կարող է իր հանգստութեան ժամերն անցկացնել հարազատ միջավայրում եթէ ոչ միշտ, գոնէ որոշ ժամանակամիջոց. մեզանում այդ կողմից հասարակական ինիցիատիվը վերին աստիճանի աղքատ է: Գալով մասնաւորին, նա կատարելապէս բացակայում է: Եւ դա մի շատ խոշոր բաց է մեր կեանքում:

Ինչ ուզում էք ասէք, դեմօկրատիան դեռ շատ է հեռու արուեստները գնահատելու և նրանց զարգացմանը նպաստելու գիտակցութիւնից: Ես ևս համոզված եմ, որ ապագան նրանն է, որ վերջ ի վերջոյ նա է լինելու բոլոր արուեստների տէրն ու հովանաւորը:

Բայց առ այժմ, դժբաղդաբար, այդպէս չէ: Առ այժմ արուեստները շքեղութիւն են, ուզում եմ ասել՝ կախված են դրամից: Ունի հարստութիւն մի ժողովուրդ, կունենայ և արուեստներ. չունի, կարող է կերակրվել միայն նրանց փշրանքներով, որ յամենայն դէպս չեն կարող շատ էլ սննդարար լինել:

Նկարչութիւն, երաժշտութիւն, Թատրոն, արձանագործութիւն, ճարտարապետութիւն, եթէ կամենաք՝ նոյնիսկ գեղեցիկ գրականութիւն, այս բոլորն առ այժմ կապիտալի սեփականութիւններն են: Ցաւալի է այդ, բայց իրողութիւն է: Եւ մենք ստիպված ենք հաշտվել այդ իրողութեան հետ ու ընթանալ ճիշդ այն շաւղով, որով ընթացել են և տակաւին ընթանում են բոլոր քաղաքակիրթ ազգերը:

Ուզում եմ ասել՝ առանց կապիտալի, առանց մասնաւոր աջակցութեան, առանց մեցենատների մենք առ այժմ չենք կարող արուեստներ ստեղծել կամ պահպանել:

Փորձեցէք ունենալ ազգային Թատրոն ժողովրդի նուէրներով: Բաց արէք հանգանակութիւն, և եթէ 50 տարվայ մէջ կարողանաք մի փոքր ի շատէ խոշոր գումար հանգանակել, այն ժամանակ կարող էք պարծենալ, Թէ ժողովրդի միջոցներով կարելի է գեղարուեստի տաճար կառուցանել: Այն ինչ՝ Թատրոնը դեռ արուեստների մէջ միակն է, որ ներկայումս ծանօթ է ժողովրդի լայն խաւերին: Իսկ նկարչութիւնը, անդրիագործութիւնը և նոյնիսկ ազգային երաժշտութիւնը տակաւին անմատչելի են նրա հասկացողութեանը:

Սպասել, որ այս հանգամանքներում մի ժողովուրդ ինքնօգնութեամբ ստեղծէ արուեստներ, կը նշանակէ սպասել դարեր... և անօգուտ:

Հետևաբար մենք կամայ ակամայ մասնաւոր ձեռնարկութիւնը պիտի խրախուսենք և ամէն մի մասնաւոր աջակցութիւն ընդունենք արժանի շնորհակալութեամբ:

Կը փափագէի միայն, որ այդ տեսակ մասնաւոր աջակցութիւններ աւելի լայն ծաւալ ստանային:

Օրինակը տրված է, հարկաւոր է միայն նրան հետևել: Պ. Մելիք-Ազարեանի նուիրաբերութեան արժէքը նրա նիւթական չափի մէջ չէ, այլ իմաստի: Արուեստին ծառայող մի ամբողջ դասակարգ չունէր մի անկիւն իր գործերը ցուցադրելու. այժմ տրվում է նրան այդ անկիւնը:

Թող մէկն ու մէկը նրանցից, որոնք միջոց ունեն աւելին անելու, մի այդպիսի անկիւն հայ բեմական արուեստին տայ, և դա կը լինի աւելի մեծ բարիք մեր ազգային քաղաքակրթութեան համար, քան շատ ուրիշ բարիքներ և նուիրատուութիւններ:

Տէրվանդաէ

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Պետերբուրգի հեռ. Գործ.)

Պետերբուրգ, 13 նոյեմբերի

Հերթին մասնաժողովի զեկուցումն է Լէնայի դէպքերի առիթով ներկայացված հարցապնդման մասին:

Զեկուցանող Լիւկ յիշեցնում է, որ Լէնայի դէպքերի մասին ներկայացված հարցապնդումները ընդունվեցին դեռ 3-րդ Դումայից, կառավարութիւնը իր բացատրութիւնները տուեց, յետոյ նշանակվեց սենատոր Մանուխինի քննութիւնը, որ մանրամասն քննեց գործի բոլոր հանգամանքները և ներկայացրեց զեկուցագիր. սակայն անյայտ է մնում, Թէ ինչ միջոցներ է ձեռք առել կառավարութիւնը Մանուխինի զեկուցագրի համապատասխան: Այդ ի նկատի ունենալով՝ մասնաժողովը առաջարկում է հարցապնդում ներկայացնել ներքին գործերի, զինուորական և առևտրի մինիստրներին՝ Թէ աւարտվա՞ծ է, արդեօք, Լէնայի հանքերի դէպքերի քննութիւնը, ձեռք առնվա՞ծ են, արդեօք, որևէ միջոցներ՝ հանքերում օրինական կարգ ու կանոնը վերահաստատելու համար և ենթարկվա՞ծ են, արդեօք, պատասխանատուութեան՝ օրինախախտ անձինք:

Մանկօվը, ինչպէս Իրկուտսկի նահանգի ներկայացուցիչ, լաւ ծանօթ լինելով Լէնայի հանքերի մէջ տիրող աշխատանքի պայմաններին, ապացուցանում է, որ Լէնայի բանուորների ներկայացրած պահանջները ոչ մի դէպքում չէին կարող անուանվել քաղաքական, այլ վերաբերում էին լոկ նրանց կեանքի ամենակենսական կողմերին, գլխաւորապէս ուտելիքի մատակարարութեան, բնակարանների, աշխատավարձքի կանոնաւոր վճարելուն:

Վիշնեակի I-ը ասում է, որ աջակողմեանները համաձայն են ներկայացված հարցապնդման հետ, բայց գտնելով որ տեղի ունեցած դէպքերի գլխաւոր մեղքը ընկնում է Լէնայի հանքերի [illegible] ընկերութեան վարչութեան վրա, ինչպէս և տեղական քաղաքացիական իշխանութիւնների վրա, ուստի աջակողմեանները կարծում են, որ հիմք չը կայ հարցապնդել զինուորական մինիստրին, որովհետև զօրամասը սոսկ իր պարտականութիւններն է կատարել: Աջակողմեանները մտցնում են համապատասխան ուղղումներ:

Վիշնեակի առաջարկութիւնը ընդունվում է 151 ձայնով ընդդէմ 100-ի:

Մասնաժողովի եզրակացութիւնը՝ հարցապնդում ներկայացնելու ներքին գործերի և առևտրի մինիստրներին՝ ընդունվում է միաձայն:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Երէկ, նոյեմբերի 14-ին, Մայր Կայսրուհի Մարիա Թէոդորովնայի ծննդեան օրը, զինուորական տաճարում մատուցվեց պա-

---

Ապա մտաւոր կուլտուրայի արտադրութիւնների պահպանութեան հա՞րցը: Մեր խօսքը գրադարանների, հնադարանների ու պատկերադարանների մասին է: Այս առիթով մենք աւելացնելու ոչինչ չունենք այն ամէնի վրա, ինչ ասացինք մամուլի մասին:

Կուլտուրական միութիւններ՝ հրատարակչական, ուսուցչական և այլն: Այստեղ չեն մտնում բարեգործական ընկերութիւնները, որովհետև կուլտուրական միաւոր չէ կարելի համարել բարեգործութիւն անուանելը, որ կոչված է ժողովրդական տարրերին քնեցնելու և տիրապետողների ձեռքին շահագործութեան համար գործիք դառնալու:

Ծանօ՞թ են մեզ միութիւնների ազատութեան վերաբերեալ օրէնքները: Մենք դեռ ձգտում ենք նրանց, որ մեր հիմնական պահանջների իրականացումից են կախված: Երբ որ համապետական ազատ օրէնսդրական մարմինները մշակեն օրէնքներ, իսկ վարչական մեխանիզմը Թոյլ տայ ամէն տեսակի միութիւններին ազատօրէն զարգանալու, այն ժամանակ նրանք կը սկսեն ծլել, իսկ նոր ծլածները—ինչպէս այդ հայերի մօտ է—կը ծաղկեն և իրանց ետեւում պատմութիւն ունեցողները արագ կերպով կառաջադիմեն: Ի՞նչ մի ազգային տրադիցիա, ազգային պրակտիկա ունեն այդ միութիւնները, որ նրանց հարցը լուծել չը կարողանայ համապետական ռամկավար կազմը:

Դպրոց: Սա գուցէ ազգային-կուլտուրական աւտօնօմիստներին մեր արած առարկութիւնների աքիլլէսեան կրունկը կազմէ, որովհետև դպրոցը ազգի կեանքում շատ մեծ դեր է կատարում. նա ունի պատմական նշանակութիւն, ծանրաբեռնվում է բազմաթիւ «ազգային» աւանդութիւններով, պարուրված է ազգային ոգով: Երեխան ընտանիքից, հասարակութեան այդ որրանից ընկնում է դպրոց, մեծ մասամբ ազգային դպրոցը, եթէ նա հնարաւորութիւն չունի համապետական կրթութիւն ստանալու: Ազգային դպրոցները «ազգային ոգու» յենարաններից ամենաուժեղն են: «Ազգային ոգին» ազգի տիրապետող տարրերի կամքի ու ցանկութիւնների արտայայտիչն է. Նրանով սնվում են տիրապետող տարրերի զաւակները, քանի որ նրանք ազգային դպրոցներում կրթվող սաների 99,9%-ն են կազմում: Եթէ ազգային կուլտուրական աւտօնօմիստները իրանց դեղատոմսի վրա հիմնված ուզում են «ազգային ոգու» տարածման քաղաքականութիւնը առաջ տանել, այն ժամանակ մեր ճանապարհները միանգամայն տարբերվում են իրարից:

Անշուշտ, դպրոցները ազգերի կեանքում բացի «ազգային ոգուց» ունեն և այլ ազգային այսպէս կոչված առանձնայատկութիւններ, ինչպէս՝ մայրենի լեզուով դասաւանդելը, մայրենի գրականութեան ու պատմութեան դասաւանդութիւնը, ուսուցչական մարմնի ինքնօրէնութիւնը իր ազգային շրջանակներում, ազգային հոգաբարձութիւն: Բայց ո՞վ կարող է այդ ամէնին հակառակ գնալ: Եւ մենք ասում ու կրկնում ենք, որ ռամկավար պետութիւնը դրա համեմատ էլ օրէնսդրութիւն կը մշակէ: Սակայն կայ առարկութիւն. շատ անգամ տեղական պէտքերը կենտրոնի կողմից չեն հոգացվում, որ հասկանալի է. չէ որ դրա համար պէտք են «ազգային» միջոցներ. այդպիսի մի միջոց է ազգային-կուլտուրական աւտօնօմիան: Նոյն առարկութիւնն է արվում նոյնպէս ազգային սովորութիւնների և ազգային-կուլտուրական այլ պէտքերի պաշտպանութեան հարցում:

«Մատաղը» հայերի ազգային սովորութիւնն է: Շաբաթի տօնումը հրէաների համար խոշոր ազգային սովորութիւն է: «Крестный ходъ»-ը ռուսական սովորութիւն է: Ազգային-կուլտուրական աւտօնօմիստները պաշտպանելու են այդ ամէնը: Եւ դեռ ինչպիսի աղմուկ են բարձրացնում այդ առիթով: Այսօր հրէական շաբաթի տօնումը բունդիստների համար ծրագրային պահանջ է դառել: Դա մի ցաւալի, սակայն իրական փաստ է:

Մենք այսօր ականատես ենք այն բանի, Թէ ինչպէս ազգային-կուլտուրական աւտօնօմիստները ազգային սովորութիւններ կոչվածը կամ ազգային դպրոցներում պատուաստվող «ազգային ոգին» և այլ ազգային հրաշալիքները իրանց բարձր հովանաւորութեան տակ են առնում: Իսկ այդ հրաշալիքների տեղը շատ է: Մեզ Թւում է, Թէ ազգային դպրոցը, ազգային պէս-պէս միութիւնները դրական մեծութիւններ են: Մենք շատ անգամ չենք էլ կասկածում, որ նրանք ունեն և իրանց բացասական կողմը: Եթէ մենք աջ և ահեակ ազգային առանձնայատկութիւնների անունից ենք ճառում, դրանով արդէն վերցնում ենք մեր վրա և նրանց բացասական յատկութիւնների պատասխանատուութիւնը: Այն ինչ, մենք հեռու պէտք է լինենք այդ պատասխանատուութիւնից: Մեր գործը չէ «ազգային ոգի» սրսկելով զբաղվելը. հետևողական ռամկավարականին ծիծաղելի է ինչ-որ շաբաթի հարցով պարապել. այդ ամէնը նրա համար դատարկ հնչիւն է լոկ:

Ազգային-կուլտուրական աւտօնօմիան նըպաստում է սեպարացիային, այսինքն՝ ազգերի անջատման, նրանց ռամկավար ույժերի առանձնացման իրարից: Ինչ-որ ազգային քաղաքականութիւն է ստեղծվում, ինչ-որ ազգային խրճիթներ են հիմնվում: Հայը իր խրճիթում «մատաղ» է պատրաստում, հրէան իր խրճիթում իր շաբաթ-օրն է կարկատում, ռուսը իր խրճիթում «Крестный ходъ»-ի համար ծրագիրներ է կազմում: Իրարից անկախ, իրարից անջատ: Մէկը միւսի հետ գործ չունի. իւրաքանչիւրը դէպի իր կողմն է քաշում, իսկ ժողովրդական շարժման ազատարար կառքը իր տեղումն է կանգնած: Սեպարատիզմը նրան Թոյլ չէ տալիս տեղից շարժվել: Մինչդեռ ինչքան է պէտք արդեօք ներկայումս ռամկավար ույժերի համագործակցութիւնը: Ի՞նչ կարող է անել ռամկավարութիւնը առանց միութեան, որի մէջն է նրա ույժը: Այդ միութեան խանգարում է ազգային-կուլտուրական աւտօնօմիան:

Հապա ինչպէս վերացնել ազգերի կուլտուրական բարիքների գլխին կախված դամոկլեան սուրը: Այսպէս են բացագանչում այդ սրի ծանրութիւնը զգացողները: Ռամկավարութիւնը այդ մասին մտածել է. նրա լուծումը ռամկավարութեան ծրագրային կէտերից մէկն է կազմում, որին մենք այժմ կանցնենք: Իսկ մինչ այդ մի երկու խօսք խառն աւտօնօմիայի մասին:

Ալ. Մարտունի

տարագ, որից յետոյ տեղի ունեցաւ գոհաբանական մաղթանք։ Զինուորական և քաղաքացիական ներկայացուցիչների թւում ներկայ էր նաև Կովկասի փոխարքան իր օգնականների հետ։ Արսէնալի սարից պարպվեց 21 թնդանօթ։ Այդ օրը կառավարական և կրթական հիմնարկութիւններն ազատ էին պարապմունքներից։ Մաղթանքներ կատարվեցին նաև Վանքի աւագ-եկեղեցում, կաթօլիկների և բողոքականների աղօթատներում, մահմեդականների մզկիթում և հրէաների սինագօգում։

◆ Նոյեմբերի 13-ին, երեկոյեան ժամը 8-ին, փոխարքայ Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվի անուան Թիֆլիսի ըէալական դպրոցում տեղի ունեցաւ տարեկան սովորական հանդէսը աշակերտութեան, սրանց ծնողների, դասատուների և հրաւիրված ներկայացուցիչների ներկայութեամբ։ Հանդէսը բաղկացած էր երաժշտական-գրական և պարահանդիսային բաժիններից։ Առաջինում հանդէս եկան ըէալական դպրոցի սաները, որոնք թէ խմբերգով և թէ ոտանաւորներով արժանացան դպրոցի նոր շինութեան մեծ դահլիճը լցրած բազմութեան ծափահարութեանը։ Աշակերտական երաժշտախումբը նուագեց նաև մի քանի կտորներ։ 7-րդ դասարան աշակերտ Սահփանեան խոստանում է լինել շնորհալի երաժիշտ (ջութակ)։ Պարերը տեւեցին ուշ երեկոյ Սվէըլլօյի ղեկավարութեամբ։ Հանդէսին ներկայ էր նաև կովկ. ուսումնարանական շրջանի հոգաբարձու Ռուդօլֆը։

◆ Թիֆլիսի մի խումբ դումայական ձայնաւորներ դումային առաջարկել են ընտրել Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվին Թիֆլիս քաղաքի պատուաւոր քաղաքացի։ Այդ յայտարարութիւնը, որ ընդունվել է համակրութեամբ, կը ներկայացվի դումայի նիստին մօտիկ ապագայում։

◆ Մայրաքաղաքի լրագիրների տեղեկութիւնների համաձայն, շուտով Թիֆլիսի և Պետերբուրգի միջև երթեւեկելու են միջազգային ընկերութեան գնացքներ հինգ վագօններով։ Այդ գնացքները մի ժամում անցնելու են 62 վերստ։ Թիֆլիսից Բագու այդ գնացքով կարելի է հասնել 9 ժամում, կանգ առնելով շատ կարճ՝ միայն Աղստաֆա, Գանձակ, Եւլախ և Հաջի-Կաբուլ կայարաններում։

◆ Պետական Դումայի 30 անդամներ (առաջինը ստորագրել է Չխէիձէն) հարց են ներկայացրել փոխարքային, թէ ինչ եղանակով օգնութիւն է տրվելու կովկասեան անբերրիութիւնից վնասված ազգաբնակութեանը։

◆ Այսօր տեղի կունենայ բժշկական ընկերութեան հրապարակային նիստը, ուր կը լինեն մի քանի հետաքրքրական զեկուցումներ։

◆ Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է տալ շուտափոյթ բժշկական օգնութեան կայարանի կառավարչին 1500 րուբլի՝ ծառայողների ռոճիկների համար։

◆ Շուտով Օդեսսայի համալսարանի մի խումբ ուսանողներ էկսկուրսիայով գալու են Թիֆլիս։

◆ Կովկասի փոխարքային ներկայացան Երևանի նահանգապետ բարոն Տիզէնհաուզէնը, Թիֆլիսի նահանգական դատարանի նախագահ Տալպիգօն և այլն։

◆ «Зак.»-ի ասելով, կոմսուհի Ելիզավէտա Անդրէեվնան այս օրերս այցելելով Անչիսխատի հինաւուրց տաճարը և, տեղեկանալով եկեղեցու միաբան Տալակվաձէից, որ դրամի բացակայութեան պատճառով եկեղեցին չէ կարողանում հասարակ վառարան գնել, պատուիրել է ձեռք բերել կատարելագործված վառարան իր հաշւով։

◆ Թիֆլիսի ոստիկանապետը բացատրել է պրիստաւներին, որ դռնապանները պէտք է հսկեն, որպէս զի մութն ընկնելուց բոլոր տների դարպասները փակ լինեն։

◆ Վերադարձել է Թիֆլիսի պօստ-հեռագրական շրջանի կառավարիչ Մուսէլիուսը։

◆ Կովկ. Հայուհեաց Բարեգ. Ընկ. վարչութիւնը խնդրում է մեզ տպել, որ ինքն շնորհակալութեամբ ստացել է յօգուտ Ընկերութեան Դաւիթ Աւան-Իզբաշեանից 100 րուբլի ի յիշատակ հանգուցեալ Փիթօյեանի։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Շիրիմների կղզին», Վ. Գալփայեանի, Թիֆլիս, 1913 թ.

Կարդալով ամբողջ 77 մեծադիր էջերից բաղկացած այս գիրքը մինչև վերջ, ակամայ հարց ես տալիս՝ արժէ՞ր կարդալ։

Ի՞նչ գիրք է սա. ճանապարհորդական թռուցիկ տպաւորութիւննե՞ր, թէ՞ երևակայական «Շիրիմների կղզու» նկարագրութիւն։ Երկուսից որն է ի նկատի ունեցել հեղինակը։ Եթէ առաջինն է, ապա «Շիրիմների կղզի» խորագիրը մի դատարկ հնչիւն է գրքի ճակատին. եթէ երկրորդը՝ այն դէպքում բովանդակութիւնը հիմովին հակասում է խորագրին։

Ըստ հեղինակի, շիրիմների կղզին՝ դա Անին է, որին ուխտի գնալու փափագ է ունեցել հեղինակը շատ վաղուց՝ «մօր գերեզմանի վրա արցունք թափելու տարագիր որդու կարօտով»... Դիմելով դէպի Անի, հեղինակը իր գրքի 67-րդ երեսի վրա միայն հասնում է իր փափագած վայրը և ընդամենը 8—10 երես յատկացնում «նախնիքների փառքի և գործերի այն շիրմին», որը մինչև այսօր էլ հիացնում է «այդ հսկաների թզուկ ժառանգներին»...

«Շիրիմների կղզին» աշակերտական միամիտ մի գրուածք է, քնարական կեղծ և անկեղծ բազմաթիւ խոստովանութիւններով. դա մի գրուածք է, որի մէջ ո՛չ զգացմունքի չափ և ոչ սրամիտ կամ աջող համեմատութիւններ կը գտնէք. էլ չեմ ասում մտքի խորութեան և պատկերների գեղարուեստականութեան մասին։

Գրուածքը օժտված է սանտիմենտալական խոշոր տարրերով. ամեն մի չնչին դէպք հեղինակին ձգում է ծայրայեղութիւնների մէջ, ինչպէս ռուսները ասում են՝ հորթային ոգևորութեան հասցնում կամ ծայրայեղ տխրութեան ու յուսահատութեան։ Ամեն վայրկեան, ամեն յարմար և անյարմար դէպքում նա պատրաստ է իր և՛ հըրճուանքով և՛ արտասուքով։ Իսկ համեմատութիւնները բաւականին «ժամանակակից»։ Թիֆլիսի Մամա-Դաւիթ սարի «շքեղ, վիթխարի բարձունքը» կարծես «Թիֆլիսեցի պճնասէր տիկին» լինի. Օրթաճալի «սաղարթախիտ» սարերի միջից քաղաքի գիշերային պատկերը՝ իր «բազմաթիւ վառվռուն աչքերով ու լուռ ակնարկներով» կարծես «արևելքի կրքոտ գեղեցկուհի» լինի. լեռան ետևից դուրս սողացող լուսինը կարծես «երկչոտ, խորամանկ թրքուհի» լինի. քամու փաղաքշանքները նման «երազի մէջ այցելող սիրուհուդ անմեղ գուրգուրանքների». աստղի գոհար բոցը նման «կրքոտ գեղեցկուհու ժպիտ-ակնարկին». փթթող վարդի պէս չքնաղ արևելքի շառագունումը նման «ըղձերով անարատ մի կոյսի» շառագունման և այլն և այլն։

Բնութեան պատկերի առջև հեղինակի ստացած տպաւորութիւնները յաճախ հակասական են. քնելուց առաջ նա ուզում էր «նուիրական նշխարհ-լուսնի» առջև ծունկ չոքել ու աղօթել, քնից յետոյ՝ լուսինը դառնում է «ցուրտ, ամայի խաւար մի մարմին»...

Գրքի տպագրութիւնը կատարված է վերին աստիճանի անխնամ. ոճական, լեզուական, կէտադրական սխալների և տառասխալների թիւը անհամար է։

«Շիրիմների կղզին» գրված է 1905 թւին, ինչպէս յիշատակված է գրքի վերջին երեսում, իսկ տպված այս տարի։ Ուրեմն հեղինակը ութ տարվայ ընթացքում կարող էր հիմնական վերամշակման ենթարկել այն և այնպէս հրապարակ հանել։

Պարոնի գրուածքի ընդհանուր թափին նայելով, չէ կարելի ասել, որ նա միանգամայն անընդունակ մարդ է. բայց նրա գիտակցութիւնը կարծես մթագնած լինի, թեթև խաւարով շրջապատված, երևակայութիւնը սահմանափակ, իսկ զգացողականը՝ հաւասարակշռութիւնից զուրկ։

Գրելով այս գրքի գրախօսականը, մենք աւելի ի նկատի ենք ունեցել տխուր երևոյթը, քան յատկապէս այս հեղինակին։ Այդպիսի գրուածքներ մենք մի քանի հատ ունենք մեր ձեռքի տակ։ Գրական մի աշխատանքով հրապարակ գալուց առաջ նախ հեղինակը ինքը պէտք է խիստ քննադատութեան ենթարկէ իր գրուածքը, տասը ձեւ ու մէկ կտրէ, և չը շտապէ խակ գրուածքներով հանդէս գալու։ Այլապէս առաջին ուժեղ սայթաքումը մեծ էլ խորտակում կարող է առաջ բերել։

Գրական ասպարէզում այսպիսի անտարբերութիւնը, խակ ինքնավստահութիւնը՝ սկսնակ գրիչների կողմից՝ միանգամայն դատապարտելի և անթոյլատրելի է։

Սուրխաթեան

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) «Ճախարակի երգը», ներդաշն. Անուշաւան Տէր-Ղևոնդեանի, Թիֆլիս, էջ 6, գ. 50 կ.։ 2) «Երաժշտական այբենարան», Ռ. Մելիքեանի և Ա. Մանուկեանի, Պետերբուրգ, 1913 թ., էջ 30, գ. 35 կ.։ 3) «Հայ գեղջուկ երգեր», ներդաշնակ. Կոմիտաս վարդապետի, № № 13—22 և 23—32, Լայպցիգ։ 4) «Ակ-Բօղատ», պատկերազարդ հէքիաթ Դ. Ն. Մամին-Սիբիրեակի, Թարգ. Ս. Թորոսեանի, Թիֆլիս, 1913 թ., էջ 28, գ. 15 կ.։ 5) «Ոսկէ աղջիկը» պատկերազարդ հէքիաթ, Թարգմ. Լ. Մելիք-Ադամեանի, Թիֆլիս, 1913 թ., էջ 20, գ. 7½ կ.։ 6) «Ովկիանոսի թագաւորը», բնագիտական զրոյց, Ռուբէն Գաբրիէլեանի, Թիֆլիս, 1913 թ., էջ 35, գ. 10 կ.։ 7) «Մարդակերի աղջիկն ու խորհրդաւոր վարպետը» իտալական հէքիաթ, Թարգմ. Ե. Թումանեանի, Թիֆլիս, 1913 թ., էջ 16, գ. 10 կ.։ 8) «Ոսկեպղը», արևելեան աւանդութիւն, Մեսեանի, Թիֆլիս, 1913 թ., էջ 16, գ. 10 կ.։ 9) «Գիւղական զրոյցներ», Ա. պրակ, Թարգմ. Բոսնակեանի, Նոր-Նախիջևան, 1913 թ., էջ 94, գ. 60 կ.։ 10) «Դաստիարակման ձևեր», Ա. գիրք, Գուրգէն Էդիլեանի, Վաղարշապատ, 1913 թ., էջ 134, գ. 50 կ.։ 11) «Կործանվածը», դրամա 4 արար., Շիրվանզադէի, Թիֆլիս, 1913 թ., էջ 143, գ. 75 կ.։

ՄԱՄՈՒԼ

Թիֆլիսի Վանքի եկեղեցուն կից՝ Էջմիածինը ունի մի հին և խարխուլ շինութիւն, որ բերում է տարեկան որոշ արդիւնք (1000—1300 ր.)։ Այդ շինութիւնը Էջմիածինը կամ սինօդը տուել է Հայոց Ազգագրական Ընկերութեանն այն պայմանով, որ սա ի հիմանց քանդի այդ տունը, կառուցանի իր ծախքով մի նոր շինութիւն և՝ որքան որ Ընկերութիւնը գոյութիւն ունենայ՝ վճարէ Էջմիածնին իբրև վարձավճար տարեկան 600 րուբլի, իսկ ընկերութեան փակվելու դէպքում՝ ամբողջ շինութիւնը տրված հողի հետ միասին մնում է սեփականութիւն Էջմիածնի։

Պէտք է ասել, որ Ազգագրական Ընկերութիւնը, ծրագրելով ունենալ սեփական բնակարան, մտադիր է զետեղել այդ բնակարանի մէջ իր մատենադարանը, ընթերցարանը, թանգարանը, ազգագրական ցուցահանդէսը, մի խօսքով՝ ունենալ մի սեփական տաճար հայկական ազգագրական և հնագիտական գիտութեան համար։ Եւ որովհետև Ընկերութեան նպատակները շատ մօտ են այն նպատակներին, որոնց ձգտում է նաև Էջմիածինը, այն է՝ ունենալ հայկական ազգագրական թանգարան, ուստի և նա յօժարել է տալ իր Թիֆլիսի կալուածքը Ընկերութեան՝ յիշեալ նպատակով։

Պէտք է ասել և այն, որ Ազգագրական Ընկերութիւնը, քանդելով հիմովին հին խարխուլ շինութիւնը, գիտութեան մի նոր տաճար կառուցանելու համար պէտք է ծախսէ առնուազն 50—70,000 րուբլի։ Եւ այդ շինութեան տէրը միշտ մնում է Էջմիածինը. միայն նա վարձով է տալիս Ընկերութեան տարեկան 600 ր. գումարով։

Պարզ է, որ Էջմիածինը նիւթական շահի հետ միասին ի նկատի է ունեցել և խնդրի բարոյական շահը, այն է՝ Թիֆլիսում ազգային մի թանգարան ունենալու օգուտը, մի թանգարան, որ կարող է կազմել Էջմիածնի թանգարանի ճիւղը։ Նիւթականին ևս գալով, պէտք է ի նկատի ունենալ, որ եթէ Էջմիածինը ստանում էր տարեկան 1000—1300 ր. արդիւնք, բայց ունէր և բաւական ծախք տան պահպանութեան, նորոգութեան վրա, այնպէս որ վերջ ի վերջոյ նա այդ շինութիւնից հազիւ ստանար տարեկան 7—800 րուբլի. իսկ այժմ ստանալով զուտ 600 րուբլի՝ նա չէ մասնակցում և այն ահագին ծախքերին, որոնք պէտք է կատարվեն նոր շինութեան վրա։

Պարզ է, որ Էջմիածինը այստեղ վատ գործ չէ կատարել և գուցէ առաջին անգամն է, որ ունեցել է ի նկատի աւելի բարոյական քան նիւթական շահ։

Սակայն Էջմիածնի այդ վարմունքը դուր չէ եկել «Հօրիզօնին», որ հանդէս է եկել պաշտպանելու Էջմիածնի շահերը՝ ընդդէմ Ազգագրական Ընկերութեան։ Նա գտնում է, որ Էջմիածինը դրանով օտարացրել է իր սեփականութիւնը, որ նա իրաւունք չունէր այդ քայլը անելու, որովհետև, ասում է նա, եթէ իրաւունք տալ Էջմիածնին իր կալուածները զիջել Ազգագր. Ընկերութեան, ինչո՞ւ նրա այդ առատաձեռնութիւնը չը պէտք է տարածվի և Բարեգործ., և Հրատարակչական, և Հայ Գրողների Ընկերութիւնների վրա։

Նախ, մենք ամենևին մի վնասակար քայլ չէինք համարի Էջմիածնի կողմից, եթէ նա վաղը զիջէր Բարեգործ. կամ Հրատարակչական Ընկերութիւններին դիցուք իր հողերից մինը՝ շէնք կառուցանելու ընկերութեան համար նոյնպիսի պայմաններով, ինչպէս զիջել է Ազգագրականին, որովհետև այդ քայլով նա նպաստած կը լինէր մի ազգօգուտ հիմնարկութեան, վտանգի տակ չը դնելով իր սեփականութեան իրաւունքը։ Գալով Գրողների ընկերութեան, պէտք է ասենք, որ նրա դրութիւնը մի փոքր այլ է, քան միւս Ընկերութիւններինը։ Թէ Ազգագրականը, թէ Հրատարակչականը, թէ Բարեգործականը, որքան և մասնաւոր ընկերութիւններ, բայց պրոֆէսիօնալ ընկերութիւններ չեն, այսինքն նրանց գոյքը, ունեցածը սեփականութիւն չէ ընկերութեան անդամների, այլ հայ հասարակութեան, հայ ժողովրդի, մինչ Գրողների Ընկերութիւնը, լինելով պրոֆէսիօնալ ընկերութիւն, նրա գոյքը սեփականութիւն է նրա անդամների ուրեմն անհատների։ Տարբերութիւնը մեծ է։ Երկրորդ՝ Գրողների Ընկերութիւնը, դեռ հազիւ միամեայ հասակ ունենալով, տակաւին որևէ մի փոքր ի շատէ աչքի ընկնող ծառայութիւն չէ կարողացել մատուցանել հայ ժողովրդին կամ գրականութեան, որ նրան ևս նոյն աստիճանի վրա դնէինք, ինչ որ Ազգագրականը և Բարեգործականը, որոնք պատկառելի բազմամեայ գործունէութիւն են ունեցել. հետևաբար այդ համեմատութիւնը աւելի քան անտեղի է։

Հետևաբար, մենք «Հօրիզօնի» ջանքերը՝ պաշտպանելու որպէս թէ Էջմիածնի և հայ ժողովրդի շահերը ընդդէմ Ազգագրական Ընկերութեան՝ գտնում ենք անտեղի և յամենայն դէպս ոչ բղխած մաքուր թելադրութիւններից, որովհետև դուրս է գալիս, որ երբ Էջմիածինը մի լաւ բան է անում, այդտեղ ևս մենք կամենում ենք նրա առաջ խոչընդոտներ յարուցանել։

Յամենայն դէպս, բնորոշ է տեսնել «Հօրիզօնը» Էջմիածնի շահերի պաշտպանի դերում։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, 11 նոյեմբ.

Համաձայն Թիֆլիսաբնակ շուշեցի պ. Ալէքսան Բաղդասարեանի յանձնարարական նամակին, ներկայացրած լինելով Ղարաբաղի թեմական դպրոցի յոբելեանի նախօրեակին Զաւէն վարդապետին յօգուտ դպրանոցի 75 ր. որպէս նուէր իր հանգուցեալ քրոջ Սօֆիա Գրիգորեան Յովսէփեանի յիշատակին, սրանով փոխադրում եմ յարգելի խմբագրութեանդ յօգուտ դպրոցական ֆօնդի 25 ր. դարձեալ նոյն պարոնի անունից և նոյն նպատակով։

Կոստանդ Մ. Պետրոսեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ «Times»-ը հաղորդում է, որ Ռուսաստանը սկզբունքով համաձայնել է, որպէս զի ալբանական գահը տրվի պրինց Վիդին։

◆ Պարիզում տեղեկութիւններ կան, որ եթէ Ֆերդինանդը յօժարակամ չը հրաժարվի գահից, այն ժամանակ կը հրատարակվեն այնպիսի սենսացիօն վաւերագրեր, որոնք բօլգարական արքային կառաջադրեն միանգամայն որոշակի մեղադրանքներ պետական դաւաճանութեան մէջ։

◆ Հաղորդում են, որ Կօկօվցէվը Բերլինում գտնված միջոցին հրաւիրել է պետական կանցլերին Պետերբուրգ։ Թէ երբ է կայանալու այդ ճանապարհորդութիւնը, դեռ յայտնի չէ։

◆ Աւստրիան վճռել է Ռուսաստանի հետ բարի յարաբերութիւնները չը վնասելու համար չը միջամտել բոլորովին բօլգարական գործերին։

◆ Բերլինում յայտնի ռուս ջութակահար Ալէքսանդր Պեչնիկօվը, որ նորերս ընտրվեց Միւնխէնի թագաւորական կօնսէրվատօրիայի պրօֆէսօր, համերգի ժամանակ վայր ձգեց Ստրադիվարիուսի ջութակը, որ արժէ 75,000 մարկ։ Ջութակը կոտրվեց։ Պեչնիկօվը ուշաթափվեց։

◆ Լօնդօնի լրագիրներին հեռագրում են Օդեսսայից, որ, լուրերի համաձայն, Իւշչինսկիին սպանողը երևան է հանվել և որ սպասվում է նրա կալանաւորութիւնը։

◆ Վիէննայում խօսում են, որ Կ. Պօլսում սպանվել է Էնվէր-բէյը։

◆ Կ. Պօլսից հեռագրում են, որ մեծ պետութիւնները բանակցութիւններ են սկսել իրար միջև Թիւրքիան ըստ ազդեցութեան շրջանների բաժանելու մասին։ Ռուսաստանը իրաւունք է ստանալու նշանակել իր ներկայացուցչին «Dette Public»-ում։

◆ Ռուսաց մայրաքաղաքների լրագիրների ասելով, ոստիկանութեան դեպարտամենտի պետ Բելեցկին նշանակվելու է ներքին գործերի մինիստրի օգնական՝ հրաժարվող Լիխօշինի փոխարէն։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾ.)

13 նոյեմբերի

ԼՕՆԴՕՆ։ Վախճանվեց աստղագէտ Բօլը։

ԲՐԻԳ (Սիլէզիա)։ Գիշերս կանգնեցնելով ճանապարհորդական գնացքը, անյայտ մարդիկ յափշտակեցին հինգ դրամական պայուսակ։

ՈՒՐԱԼՍԿ։ Երէկ ժանտախտով հիւանդացան 23 հոգի։ Մնում են հիւանդ 26 հոգի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դումայի մասնաժողովը ընդունեց ոստիկանութեան վերակազմութեան օրինագիծը ընդհանուրի ձայներով ընդդէմ երեքի և ձեռնարկեց յօդուածային քննութեան։

Ժողովրդական առողջապահութեան մասնաժողովը ընդունեց այն օրինագիծը, որով Պետերբուրգում հիմնվելու է հակաալկօհօլական կլինիկական ինստիտուտ։

ՄՈՒԿԴԷՆ։ Անհանգիստ դրութեան պատճառով յայտարարվեց պատերազմական դրութիւն։ Վերացվեց դուգուի պաշտօնը։ Մանջուրիան կազմում է առանձին զինուորական շրջան զօրահրամանատարով։

ՆԷԱՊՕԼ։ Բացվեց եւրօպական երկաթուղիների ներկայացուցիչների հերթական վեհաժողովը։

ԲԵՐԼԻՆ։ Րէյխստագը մասնաժողովին յանձնեց լրտեսութեան հարցին վերաբերող օրինագիծը։

ՊՕՐՏ-ՀՈՒՐՕՆ (Միչիգան նահ.)։ Այրվեցին երկաթուղային արուեստանոցները։ Վնասը մի միլիօն դօլլարից աւելի է։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թւի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—Արագ գնացքը № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.։ Պօստատար գնացքը № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բագու 3 ժ. 31 ր. ցեր.։ Մարդատար գնացքը № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ.։ Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ., Խառն գնացքը № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., անձակ 1 ժ. 7 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 19 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 7 ժ. 28 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.—Պօստատար գնացքը № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 56 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ Մարդատար գնացքը № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.։ Մարդատար գնացքը № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.։ Խառն գնացքը № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—Պօստատար գնացքը № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 24/23 (միայն II և III կարգի վագօններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12 ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երևան 1 ժ. 33 ր. ցեր.։ Մարդատար-ապրանքատար գնացքը № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպօլ 11 ժ. ր.50 ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.։

ԲՕՐԺՕՄ.—Մարդատար գնացքը № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բօրժօմ 9 ժ. 31 ր. ցեր.։ Մարդատար № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցեր., Բօրժօմ 1 ժ. 2 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—Արագ գնացքը № 5—9 ժ. 35 ր. եր. Պօստատար գնացքը № 3—9 ժ. 1 ր. առ.։ Մարդատար գնացքը № 7—3 ժ. 53 ր. ցեր.։ Խառն գնացքը № 107—2 ժ. 12 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—Պօստատար գնացքը № 4—9 ժ. 16 ր. երեկ.։ Մարդատար գնացքը № 8—5 ժ. 54 ր. ցեր.։ Մարդատար գնացքը № 10—8 ժ. 40 ր. առ.։ Խառն գնացքը № 106—3 ժ. 38 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—Պօստատար գնացքը № 4Д./3—7 ժ. 32 ր. եր.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 26/25—(II և III կարգի վագօններով)—10 ժ. 50 ր. առ.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 16/15—7 ժ. 28 ր. առ.։

ԲՕՐԺՕՄԻՑ.—Մարդատար գնացքը № 17/18—11 ժ. 7 ր. եր.։ Մարդատար գնացքը № 19/20—7 ժ. 38 ր. առ.։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՄԲԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւանդութ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ք ժ. աչքի, ներքին և նեարդային հիւ.։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Ն. Ց. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վերքաբուժութեան և միզասեռ. հիւ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Կ. Դ. ԳՈՒՐԳԵՆԻՋԷ—1—2 ժ. ներքին, երեխայոց հ. և ծաղկահատ։ Արեան, մէզի, խուխի հետազօտութիւն։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԳԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԻՐԻԿՈՒՆՆԵՐԸ
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Կ. Դ. ԳՈՒՐԳԵՆԻՋԷ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—104

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան- առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմեօնօվսկայա փող., № 18 (Վօրօնցօվի արձան ի մօտ)։ Բժշկի բնակարան Սեմեօնօվսկայա, № 16.
(չ.ու.կ.) 804. 100—21

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
ՅՕԳՈՒՏ „ՄՇԱԿԻ" ՖՕՆԴԻ
հետևեալ գրքերը.
1) «ՄՇԱԿ» ԵՒ ՀԱՅ ԿԻՆԸ գ. 1 ր.
2) «ՄՇԱԿԻ» ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿԸ կազմեց Լ. Դանիէլեան » — 50 կ.
3) ՀԱՄԱԼԻ ՄԱՍԼԱՀԱԹՆԻՐԸ » — 30 կ.
4) ԿԱՅԵՆԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ, դրամա 5 գ. Ս. Առաքելեանի » — 50 կ.
5) ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ «ՄՇԱԿԻ» («Մշակի» յօբելեանի առիթով «Տարազի» հրատարակած ալբոմ) 1 ր.
6) ԴՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I 1 ր.
Վերոյիշեալ հրատարակութիւններից մի մի օրինակ պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։
(2) 10—1

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный